

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ – ԵԿԵՂԵՑԻ – ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Գազիկ Տերտերյան

Ինչպես հայտնի է, ազգային անվտանգության առաջնակարգ խնդիրն ազգային արժեհամակարգի եւ առաջին հերթին՝ նրա հոգեւոր բաղադրիչի պահպանումն է: Միաժամանակ, իրական հոգեւոր արժեքներն ունիվերսալ են եւ ըստ այդմ՝ վերազգային, հետեւաբար հոգեւորի պահպանումը գլոբալ անվտանգության խնդիր է: Հարցն այս տեսանկյունից դիտարկելով՝ պետք է ընդունել, որ Հայության հոգեւոր անվտանգությունը զուտ «հայկական» մոտիվներով չէ միայն պայմանավորված: Մեր հոգեւոր արժեքների մի զգալի հատվածը համամարդկային բնույթ ունի եւ այդպիսով համաշխարհային քաղաքակրթական համակարգի մասն է կազմում: Դա իր հերթին նշանակում է, որ Հայության հոգեւոր արժեքները գլոբալ անվտանգության սուբյեկտ են հանդիսանում: Այդ հանգամանքը աշխարհայացքային առումով խիստ կարեւոր է, բայց եւ՝ մեր արժեհամակարգի անվտանգության երաշխիք չէ:

Հոգեւոր ոլորտն այսօր առավել, քան նախկինում, քաղաքականացված է: Մրցակից ազգի արժեքային համակարգի խարխուլումը եւ կազմալուծումը դարձել է քաղաքակրթական հակամարտությունների համատեքստում ընթացող ժամանակակից տեղեկատվական պատերազմների գլխավոր նպատակներից մեկը: Արդի զարգացումների միտումները վկայում են, որ համամարդկային եւ հատկապես՝ քրիստոնեական հոգեւոր արժեհամակարգին նետված են լուրջ մարտահրավերներ: Այստեղից, մասնավորապես, հետեւում է, որ ընդհանրական հոգեւոր համակարգի պաշտպանության խնդրում Հայությունն ունի պարտականությունների եւ իրավունքների իր մասնաբաժինը:

Մարդկության հոգեւոր անվտանգությանն ուղղված սպառնալիքների լրջության մասին է վկայում այն, որ որոշ վերլուծաբաններ արդեն իսկ ժամանակակից քաղաքական զարգացումները դիտարկում են նաեւ հետպատմական՝ այսպես կոչված էսխատոլոգիական (վախճանաբանական) տեսանկյունից: Նման տեսանկյունը մեթոդաբանական նշանակություն ունի, քանի որ այդպիսով փորձ է արվում քաղաքական ոլորտում միավորել նյութականն ու հոգեւորը, եւ, թեկուզ առայժմ տեսականորեն, ձերբազատվել այն պնդումից, թե քաղաքականությունն ու բարոյականությունը անհամատեղելի են: Այս առիթով նկատենք, որ դեռեւս

ռազմավարության որոշ դասականների կարծիքով՝ «մեծ ռազմավարությունը» անպայմանորեն պետք է պարունակի «բարոյականություն», այլապես չի կարող արդյունավետ լինել:

Մեզանում հոգեւոր անվտանգության իրականացումը պահանջում է Եկեղեցու, Պետության եւ Հասարակության ողջ ներուժի օգտագործում: Մինչդեռ հայտնի է, որ այսօր այդ սուբյեկտների բովանդակային հարաբերությունները (առանց ծանրանալու առանձին օրինակների վրա) դեռեւս բավարար մակարդակի վրա չեն:

Նախկինում հայտնի են դեպքեր, երբ Պետությունը եւ Եկեղեցին կնքում էին համաձայնություն՝ կոնկորդատ, որը կոչված էր կարգավորել հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների միջեւ հարաբերությունները եւ ձեւավորել ներդաշնակություն: Սակայն ներկայում միայն այդ երկուսի միջեւ ձեռք բերված համաձայնությունը բավարար չէ. այսօր առանց հասարակության, նրանում տիրող տրամադրությունների եւ մտայնությունների՝ դժվար է պատկերացնել ներդաշնակ հանրություն: Մինչդեռ, արդիի հայ հասարակությունում հոգեւոր եւ աշխարհիկ պատկերացումները (հատկապես ազգային ընդհանրական գաղափարախոսության բացակայության պարագայում) բազմազան են եւ հաճախ էլ՝ հակասական, ինչն ավելի է բարդացնում համաձայնության մթնոլորտի ձեւավորումը:

Ի լրումն այդ ամենի, հանրություն են ներմուծվում գաղափարախոսական դրույթներ, որոնք չեն նպաստում հոգեւորի եւ աշխարհիկի միջեւ ներդաշնակության ձեւավորմանը: Մասնավորապես, նման դրույթներից է «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը: Ողջունելով նման հասարակությանը վերագրվող քաղաքացիական ակտիվության, ինքնակազմակերպման եւ նախաձեռնության արտահայտումները՝ կիսում ենք մի շարք մտածողների մտահոգությունը այն մասին, որ հասարակության կազմակերպման նման ձեւը եւ բովանդակությունը ենթադրում են հանրության որոշակի ատոմիզացիա, նրա տարբեր հատվածների միջեւ հակասությունների խորացում: Ըստ մեզ, «քաղաքացիական» հասարակության որոշ դրույթներ պարունակում են նաեւ տոտալիտար գաղափարախոսության տարրեր, քանի որ փորձում են մարդկանց գիտակցությունում ամրագրել հասարակություն – իշխանություն հարաբերությունների անխուսափելի անտագոնիզմը, ինչով եւ հիշեցնում են բոլշևիկյան դասակարգային մոտեցումները: Որոշակի խնդիրներ են առաջանում նաեւ մարդու իրավունքների հասկացողության բացարձակացումից, ինչը նույնպես երբեմն ծայրահեղական, ֆորմալիզացված մեկնությունների առիթ է տալիս:

Սակայն ակնհայտ է, որ արտաքին մարտահրավերներին դիմակայելը եւ այդ մարտահրավերներից բխող հնարավորությունների օգտագործումը հնարավոր է միայն բավարար ներքին հոգեւոր ռեսուրսներ

ունենալու պարագայում, ինչի սակավությունն այսօր ակնհայտ է: Բավական է ասել, որ մեր տեղեկատվական դաշտում «հոգեւոր իշխանություն» բառակապակցությունը գրեթե չի կիրառվում: Դա մասամբ պայմանավորված է հանրությանը հուզող հարցերի հանդեպ Չայ Եկեղեցու պասիվ դիրքորոշումներով: Միեւնույն ժամանակ, հոգեւոր ոլորտում իր կարեւորագույն դերակատարումն ունի նաեւ Չայոց Պետությունը, եւ այս առիթով տեղին է հիշել աստվածաբանական «կատեխոն» հասկացությունը, որը մեկնաբանվում է իբրեւ ամենաթողության զսպում, ինչը համարվում է Պետության սրբազան պարտականությունը: Այսօր պետք է վերականգնել աշխարհիկ իշխանության այդ դերակատարումը. պետությունը իր վրա պետք է վերցնի հոգեւոր անվտանգության ապահովման աշխարհիկ գործառույթների ողջ համալիրը:

Պետք է ասել, որ Չայ Եկեղեցին, Չայոց Պետությունը եւ Չայությունն ընդհանրապես, տիրապետում են այն հատկանիշներին, որոնք անհրաժեշտ են հանրության հոգեւոր առանցքի ձեւավորման եւ պահպանման համար:

Մասնավորապես, Չայ Եկեղեցին այն եզակի եկեղեցիներից է, որի էությանը խորթ են թե՛ արեւմտյան (հատկապես բողոքական) եկեղեցիներին բնորոշ սեկուլյարիզացիան (աշխարհականացումը), թե՛ արեւելյան եկեղեցիներին հատուկ օրթոդոքս, խիստ պահպանողական մոտեցումները: Այսինքն՝ դարերի խորքից եկող մեր հոգեւոր-եկեղեցական մշակույթն ավելի քան համարժեք է արդի գլոբալացման մարտահրավերներին: Իբրեւ հայկական ուրույն քաղաքակրթության վառ դեմք, մեր Եկեղեցին կարեւորագույն դերակատարում պետք է ունենա ապագա բազմաքաղաքակրթական աշխարհակարգում, եւ նրա առաքելությունը չի սահմանափակվում միայն Չայաստանի ու Չայության սահմաններում: Այսպիսով, դարերով Չայության կազմակերպման խնդիրներն իրագործող Չայ Եկեղեցին, արդի եզրաբանության համաձայն, մրցունակ է ու ըստ այդմ՝ պարտավոր է ստանձնել հոգեւոր առաջատարի դերը մեր հանրությունում:

Չոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների առաքելությունը հասարակությանը ծառայելն է: Իր հերթին, հասարակության հոգեւոր եւ մտավոր բովանդակությունն արժեզրկվում է, եթե չի հետեւում իր ազգային-հոգեւոր էությանը եւ չի ծառայում իր պետությանը: Չայ Եկեղեցու եւ Չայոց Պետության խնդիրն է՝ ծրագրել եւ իրագործել նախագծեր, որոնք կստեղծեն հանրությունում հոգեւոր մթնոլորտ եւ կապահովեն գաղափարական ներդաշնակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐԵՆԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՋ *Վարդան Աթոյան*

Պետությունը, ինչպես հայտնի է, ազգի քաղաքական կազմակերպման բարձրագույն ձևն է: Այն, միեւնույն ժամանակ, տնտեսական օրգանիզմ է, որը լինելով համաշխարհային շուկայի մի մասնիկ՝ ակտիվ մրցակցում է այլ տնտեսական միավորների հետ, ինչպես ապրանքներն են մրցակցում միմյանց հետ սպառողական շուկայում: Հատկանշական է, որ երբեմն այդ մրցակցությունը դուրս է գալիս թույլատրելի սահմաններից՝ վերաճելով ընդհուպ պատերազմների: Այս համատեքստում՝ հարկ ենք համարում մեջբերել Գարեգին Նժդեհի՝ տվյալ երեւոյթին տված հետեւյալ դիպուկ բնորոշումը. «Բոլոր ժողովուրդները, լուսավորյալ թե վայրենի, ձգտում են արեւի տակ հարմար եւ կայուն մի տեղ գրավել: Նրանք զենքի են դիմում երբեմն ռազմասիրությունից, երբեմն մրցակցությունից, երբեմն կույր ատելւթյունից մղված: Պատերազմում են, երբ պետք է նորանոր շուկաներ ձեռք բերել, ծովերի տեր դառնալ, երբ պետք է ինքնապաշտպանվել կամ ապահովել այս կամ այն երկրի անկախությունը»:

Ցանկացած պետության համար բրենդի ձեւավորումը ռազմավարական նշանակւթյան խնդիր է: Հատկապես արտաքին տնտեսական քաղաքականւթյան արդյունավետւթյունը եւ տնտեսական աճի բնականոն զարգացումը մեծապես կախված են արտաքին շուկայում տվյալ երկրի ճանաչելիւթյունից եւ հեղինակւթյունից: Զբոսաշրջիկների, տեղական ու արտասահմանյան ներդրողների, սպառողների ուշադրւթյունը գրավելու եւ տնտեսւթյան մեջ հավելյալ գումարներ ներգրավելու նպատակով տարվող մրցապայքարում, սովորաբար, հաղթում են նրանք, ովքեր կարողանում են լավագույնս ճիշտ դիրքավորվել համաշխարհային շուկայում, այդ թվում՝ վարելով արդյունավետ տարածաշրջանային մարքեթինգային քաղաքականւթյուն: Այդ գործում մեծապես օգտակար են տվյալ երկրի բրենդի ձեւավորումը եւ համաշխարհային շուկայում դրա առաջնւթյունը:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, բրենդերը, սովորաբար, հասնում են հաջողւթյան այն դեպքում, երբ կարողանում են հստակ դիրքավորվել սպառողների ենթագիտակցւթյան մեջ (կամ երբ բացահայտված են սպառողների այն հիմնական խմբերն ու ենթախմբերը, որոնց համար նախատեսված է տվյալ բրենդը): Օրինակ, Փարիզ ասելով, նախ եւ առաջ, ենթագիտակցորեն հասկանում ենք նորածեւություն, ռոմանտիզմ, Նյու Յորքի դեպքում՝ բիզնես, էներգիա, Վաշինգտոն՝ ուժ, հզորւթյուն,

Տոկիո՝ ժամանակակից, առաջավոր տեխնոլոգիա, Եգիպտոս՝ հին մշակույթ, Չոուն՝ հիասքանչ դասական ճարտարապետություն, Ռիո դը ժանեյրո՝ տոնախմբություն, Գերմանիա՝ հուսալիություն, Ճշտապահություն եւ այլն: Այդ տեսանկյունից չափազանց արժեքավոր է բրիտանացի գիտնական Սայմոն Անհոլտի եւ մարքեթինգային հետազոտությունների արդյունքների մշակմամբ զբաղվող ամերիկյան «Global Market Insite» կազմակերպության իրականացրած ուսումնասիրությունը, որում նրանք փորձել են գնահատել 35 զարգացած եւ զարգացող պետությունների վարկանիշները եւ գումարային տեսքով ներկայացնել դրանց բրենդի արժեքը: Վարկանիշը գնահատելու համար նրանք օգտագործել են 6 հիմնական ցուցիչներ. ա) գրավչություն զբոսաշրջության տեսանկյունից, բ) մարդկային կապիտալ, գ) արտահանվող ապրանքների որակ, դ) գրավչություն մշակութային առումով, ե) կառավարության կողմից տարվող քաղաքականության արդարության աստիճանը, զ) պետության՝ որպես բնակության հիմնական վայրի գրավչությունը: Հետազոտողները կազմել են ազգային բրենդերի վարկանիշը, այնուհետեւ՝ «Brand Finance» ընկերությունը յուրաքանչյուր բրենդին տվել է գումարային տեսք: Պետք է նշել, որ նրանց գնահատմամբ յուրաքանչյուր պետության բրենդի արժեքը կազմում է տվյալ պետության ՀՆԱ-ի 2-ից 10%-ը, իսկ տոկոսների միջեւ տարբերությունը մեկնաբանվում է երկրի ընդհանուր զարգացածության մակարդակով, սակայն, վերջնական արժեքը ձեւավորվում է ՀՆԱ-ի հինգ տարիների գումարով, որը հաշվարկվել է դրամական միջոցների ներկա արժեքով:

Հատկանշական է, որ բրենդի գնահատման մեթոդները հիմնականում օգտագործվում են առեւտրային ապրանքանիշների վարկանիշը գնահատելու համար, իսկ պետության բրենդի թե՛ վարկանիշային, թե՛ գումարային գնահատումը համեմատաբար նորություն է:

Կազմակերպությունների միջեւ տեղի ունեցող մրցակցության եւ մարքեթինգային համալիր միջոցառումների հիմքում գործող օրինաչափությունները գրեթե նույնությամբ կիրառելի են պետության մարքեթինգային քաղաքականությունը մշակելիս: Ահա այս համատեքստում, մեր դիտարկմամբ, անհրաժեշտ է մշակել Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ մարքեթինգային ռազմավարության հայեցակարգ, որտեղ առանձին բաժին հատկացված կլինի բրենդինգին, սակայն պակաս կարելու չէ նաեւ Product Placement-ի¹ հնարավորությունների օգտագործումը: Այս

¹ Մարքեթինգային գործիք, որը կարելի է բնութագրել որպես քողարկված գովազդի տեսակ: Այն ենթադրում է գովազդվող առարկայի ներկայացումը, հիշատակումը ֆիլմերում, ՋԼՄ-ում, գրքերում, համակարգչային խաղերում՝ դրական լույսի ներքո:

խնդրի կարելիությունը առավել ցայտուն արտահայտվում է անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որտեղ դեռ նոր ձեւավորվում եւ կայացման ճանապարհին են գտնվում ազատ շուկայական տնտեսությանը բնորոշ ինստիտուտները:

Աշխարհի զարգացած պետությունները ուժեղ են իրենց տնտեսվարող սուբյեկտներով: Առանց վերջինիս կատարելագործման հնարավոր չէ պետության բրենդ ստեղծել: Օրինակ՝ շվեյցարական կազմակերպությունները առաջատար տեղեր են զբաղեցնում բարձրորակ ժամացույցների, դանակների, պանրի եւ շոկոլադի շուկաներում: Ամբողջ աշխարհին հայտնի են նաեւ շվեյցարական բանկային համակարգի հուսալիությունը եւ հաճախորդների սպասարկման բարձր մակարդակը: Այստեղ պետք է նշել, որ շվեյցարական բանկերն իրենց անհատական բրենդերի ձեւավորմամբ սկսել են զբաղվել դեռեւս XIX դ. կեսերից, որի ընթացքում առավելագույնս օգտագործել են կարմիր գույնը: Այսօր կարմիր եւ սպիտակ գույները դարձել են Շվեյցարիայի խորհրդանիշը, ինչը վկայում է, որ այս երկիրն ունի հստակ մշակված մարքեթինգային ռազմավարություն: Բացի վերը նշվածներից, կան նաեւ պետությունների ընդունված խորհրդանիշներ՝ դրոշ, զինանշան, օրհներգ, ինչպես նաեւ՝ կարգախոսներ, որոնք ճանաչելի են շատերին: Բերենք պետությունների կարգախոսների մի քանի օրինակ.

- ❖ ԱՄՆ - American Dream - ամերիկյան երազանք,
- ❖ Մեծ Բրիտանիա - Cool Britannia - զով Բրիտանիա,
- ❖ Իտալիա - Dolce Vita - քաղցր կյանք,
- ❖ Գերմանիա - Vorsprung durch Technik - առաջընթաց տեխնոլոգիայի միջոցով,
- ❖ Շվեյցարիա - Keeping Privacy - անձնական գաղտնիքի պահպանություն:

Տնտեսապես հզոր եւ զարգացած երկրները վաղուց արդեն ստեղծել են ներքին ու արտաքին սպառման համար նախատեսված եւ իրենց պետությունը բնութագրող խորհրդանիշներ, կարգախոսներ, իսկ շատերն էլ դեռ նոր են փորձում որոշ քայլեր կատարել այդ բնագավառում: Ճիշտ պատկերացնելով օրվա հրամայականը՝ այսօր պետությունները մարքեթինգային արշավների միջոցով փորձում են ամրապնդել իրենց դիրքերը միջազգային շուկայում՝ պահպանելով երկրի դեմքը գլոբալացման ներկայիս պայմաններում:

Այսօր մի շարք երկրներ պետության առաջնղման համար, մասնավորապես՝ գովազդային արշավի իրականացում կամ գովազդի ավանդական եւ ոչ ավանդական մեթոդների կիրառում, ծախսում են ահռելի գումարներ, որոնք սովորաբար բաշխվում են գովազդային գործակալությունների,

խորհրդատվական ընկերությունների եւ հասարակության հետ կապերի համար պատասխանատու մասնագետների միջեւ: Այսպես՝ Սինգապուրը տարեկան ծախսում է շուրջ 60 մլն ԱՄՆ դոլար, Մալայզիան՝ 150, Լոնդոնը 2003–2004թթ. այդ նպատակների համար ծախսել է շուրջ 40 մլն ԱՄՆ դոլար: Ռուսաստանն աշխարհում իր վարկանիշի բարելավման համար 2007թ. պետական բյուջեից ծախսել է շուրջ 5 մլն ԱՄՆ դոլար, նույն նպատակով ԱՄՆ-ը իր բյուջեից տարեկան ծախսում է շուրջ 1 մլրդ դոլար:

Մեր ժամանակներում, մարքեթինգային բազմաթիվ հետազոտությունները հուշում են, որ գովազդը դիրքերն աստիճանաբար զիջում է PR-ին՝ հասարակության հետ կապերին: Ընդ որում, չնայած ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ սպառողների ճնշող մեծամասնությունը չի հավատում գովազդին, սակայն, այնուամենայնիվ, այն առ այսօր շարունակում է մնալ որպես տեղեկատվությունը սպառողին հասցնելու լավագույն մարքեթինգային գործիքներից մեկը: Ընդունելով այս իրողությունը՝ մի շարք հեղինակավոր մասնագետներ գտնում են, որ ժամանակակից տնտեսական աշխարհում գովազդի միջոցով բրենդ չեն ձեւավորում. այն ձեւավորվում է հասարակության հետ կապերի միջոցով, իսկ գովազդը կատարում է մեկ ուրիշ գործառույթ, այն է՝ արդեն իսկ ձեւավորված բրենդի պահպանում:

Պետության բրենդի ձեւավորման անհրաժեշտությունը առավել պատկերավոր ներկայացնելու համար՝ հիշենք, թե ինչպես են մարդիկ ցանկանում գնել գերմանական ավտոմեքենաներ, ճապոնական տեխնիկա, ֆրանսիական մոդայիկ հագուստ, չեխական գարեջուր, շվեյցարական ժամացույց եւ այլն:

Այսօր Չայաստանն աշխարհին ներկայանալու խնդիր ունի, եւ այս համատեքստում պետք է քննարկել, թե ինչպես եւ հատկապես ինչով պետք է ներկայանանք աշխարհին, որպեսզի հնարավորություններ ստեղծվեն առավել արդյունավետ դիրքավորվել համաշխարհային շուկայում եւ գրավիչ լինել սպառողների ու ներդրողների համար: Կարող ենք փաստել, որ մեզ այսօր աշխարհում ճանաչում են առավելապես որպես ցեղասպանություն վերապրած ժողովուրդ, 1988թ. աղետալի երկրաշարժի ենթարկված եւ հարեւան Ադրբեջանի հետ հակամարտության մեջ գտնվող պետություն: Այդ համատեքստում դրական պետք է գնահատել 2001թ. Չայաստանում անցկացված միջոցառումների շարքը՝ նվիրված Չայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին, որոնք, անկասկած, դրականորեն անդրադարձան պետության վարկանիշի եւ որպես առաջին քրիստոնյա ազգ՝ հայության ճանաչելիության վրա:

Գալով ներկային՝ պետք է փաստել, որ չնայած Չայաստանի վարկանիշին ներքաղաքական վերջին զարգացումների հասցրած լուրջ

հարվածին, որը չի կարող բացասական ազդեցություն չունենալ տնտեսության, մասնավորապես՝ զբոսաշրջության զարգացման եւ արտաքին ներդրումների ծավալի վրա, առկա են նաեւ դրական գործընթացներ: Մասնավորապես՝ արդյունավետ էր աշխարհով մեկ հեռարձակվող CNN հեռուստաալիքով Հայաստանի մասին պատմող գովազդային հոլովակը, որը միտված էր Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը եւ որը, բնականաբար, իր նպաստն ունեցավ մեր պետության բրենդի ձեւավորման գործում: Վերջին տարիներին ավանդույթ են դարձել արտերկրում, մասնավորապես՝ Ռուսաստանում, Ֆրանսիայում անցկացվող մշակութային միջոցառումները՝ Հայաստանի օրեր, Հայաստանի տարի եւ այլն, որոնք նույնպես դրական ազդեցություն են ունենում «Հայաստան» բրենդի ձեւավորման համար: Կամ Հայաստանի օլիմպիական հավաքականի վերջերս գրանցած աննախադեպ հաջողությունը՝ վեց օլիմպիական մեդալների տեսքով, ինչն, անշուշտ, դրականորեն անդրադարձավ աշխարհում ՀՀ ճանաչելիության վրա²:

Միանշանակ է, որ Հայաստանում պետական մակարդակով տարվող բրենդինգային քաղաքականությունը դրական ազդեցություն կունենա, նախ եւ առաջ, արտասահմանյան ներդրումների, զբոսաշրջության եւ Հայաստանում արտադրվող ու արտահանվող ապրանքատեսակների ծավալների մեծացման վրա: Այդ նպատակով կարելու է ենք ՀՀ-ում, որեւիցե գերատեսչության կառուցվածքում, ունենալ պետության բրենդինգային քաղաքականությամբ զբաղվող մարմին, որը եւ կմշակեր դրա ռազմավարությունը՝ որպես պետության մարքեթինգային քաղաքականության բաղադրիչ՝ կարճաժամկետ եւ երկարաժամկետ կտրվածքով, օգտագործելով նաեւ մասնավոր սեփականատերերի հնարավորությունները: Աշխատանքներում ցանկալի է ներգրավել եւ արտասահմանյան մասնագետների, ընկերությունների՝ այս ոլորտում նրանց փորձն օգտագործելու համար, եւ հայաստանցի մասնագետների, որոնք ծանոթ են տեղի առանձնահատկություններին: Այդ համագործակցությունը, կարողությունների համատեղումը, վստահաբար, կտա դրական արդյունք:

² Հատկանշական է նաեւ ՀՀ կառավարության 1509-Ն որոշումը (առ 20.10.2007թ.)՝ Հայաստանը ներկայացնող վավերագրական ֆիլմ նկարահանելու ու միջազգային հեղինակավոր հեռուստաալիքներով հեռարձակելու մասին, որն ուղղված է Հայաստանի՝ որպես կայուն, ապահով ու ձեռնարկատիրական գործունեության, ներդրումների համար բարենպաստ եւ զբոսաշրջության համար գրավիչ երկրի, նկարագրի ձեւավորմանն ու միջազգային շուկայում պատշաճ ներկայացնելուն: Նշենք, որ այդ նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսել է ծախսել 46128.74 հազ. դրամ:

«ՆԵՐՔԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ» ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ

Ռուբեն Մելքոնյան

Հայտնի է, որ փոքրամասնությունների եւ էթնիկ ինքնության խնդրի նկատմամբ Թուրքիայում կա զգայուն մոտեցում, եւ սա բնական է մի երկրի համար, որն ունի մեծ խառնիճադանջ էթնիկ նկարագրով բնակչություն: Ինքնության մասին քննարկումները Թուրքիայում բավական լայն տարածում են գտնում, որոնց հանդեպ պետական տարբեր պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ փորձում են վերաբերմունք դրսևուրել եւ այդպիսով՝ նաեւ յուրահատուկ լուծումներ առաջադրել: Նման դեպքերից հատկապես կցանկանայինք առանձնացնել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի կողմից հրապարակ նետված այն թեզը, համաձայն որի՝ Թուրքիայի քաղաքացիները կարող են ունենալ երկու ինքնություն՝ վերին եւ ներքին: Վերին ինքնությունը խորհրդանշում է քաղաքացիությունը, իսկ ներքինը՝ էթնիկ ծագումը: Հարկ է նշել, որ այս մասին Էրդողանը հրապարակավ արտահայտվել է քանիցս: Օրինակ, մեջբերենք 2005թ. նոյեմբերին Շըրնաքում արած նրա հետեւյալ հայտարարությունը. «Իշխանությունները երեք կարմիր գիծ ունեն՝ էթնիկ, տեղային եւ կրոնական ազգայնականություն: Առաջինը էթնիկ ծագման հենքով ազգայնականությունն է, եւ սա մենք վերացնելու ենք: Թուրք, քուրդ, չերքեզ, լազ՝ բոլորս Թուրքիայի Հանրապետության քաղաքացու վերին ինքնության հովանու տակ մեկ եւ միասնական ենք լինելու: Ներքին ինքնություններին հարգանք ենք տածելու, սակայն բոլորիս վերին ինքնությունը Թուրքիայի Հանրապետության քաղաքացիությունն է»: Էրդողանը, վերին ինքնության իր միտքը զարգացնելով, ասել է, որ Թուրքիայում կան մոտ 30 էթնիկ խմբեր, որոնց վերին ինքնությունը Թուրքիայի քաղաքացիությունն է: «Սխալ է, օրինակ, մեր քուրդ քաղաքացիներին ասել՝ դու քուրդ չես, թուրք ես, նույնը վերաբերում է նաեւ լազին, վրացուն, չերքեզին, աբխազին, ալբանացուն, բոսնիացուն եւ այլն», – հայտարարել է Էրդողանը: Կամ՝ 2005թ. նոյեմբերի 20-ին Շենդիլիում Էրդողանի արտահայտած հետեւյալ միտքը. «Թուրքը պետք է կարողանա ասել ես թուրք եմ, քուրդը՝ քուրդ եմ, լազը՝ լազ եմ, չերքեզը՝ չերքեզ եմ, մեր բոլորիս վերին ինքնությունը Թուրքիայի Հանրապետության քաղաքացիությունն է»:

Ի դեպ, «վերին ինքնության» մասին Էրդողանի արտահայտած միտքը մեծամասամբ ունի պանօսմանիզմի գաղափարի հետ, համաձայն որի՝

Օսմանյան կայսրության բոլոր քաղաքացիները համարվում էին օսմանցի:

Էթնիկ ինքնության հարցի հետ է ուղղակիորեն առնչվում նաև տասնամյակներով թուրքական քաղաքական դիսկուրսում առկա հետեւյալ հարցը՝ Թուրքիան իր բազմէթնիկ բնակչությամբ ինչպիսի՞ պետություն է՝ մոզաի՞կ, թե՞ մարմարե: «Մոզաիկ պետությունը» առաջին հերթին ենթադրում է երկրում ապրող տարբեր էթնիկ խմբերի գոյության ընդունում եւ սրանից բխող որոշ այլ հարցեր եւս (օրինակ՝ ազգային մշակութի, լեզվի հանդեպ հարգանք եւ այլն): «Մարմարե պետությունը» ենթադրում է միատարր, այն է՝ թուրքական պետություն ամեն առումով, եւ սա էլ, իր հերթին, գրեթե մերժում է այլ էթնիկ խմբերի գոյությունը եւ Թուրքիայում բնակվող բոլոր ազգերին համարում թուրք: Երդողանի հայտարարությունը տպավորություն է ստեղծում, թե նա պաշտպանում է «մոզաիկ պետության» տարբերակը, ինչի մասին նա նույնիսկ հայտարարել է: Այս քննարկումների ընթացքում արտահայտվեցին անգամ իրավաբաններ. օրինակ, Թուրքիայի Ազգային ժողովի սահմանադրական հանձնաժողովի նախագահ Բուրհան Քուզուն հետեւյալ կարծիքն արտահայտեց. «Թուրքիան նման է մարմարի, սակայն մարմարը տարբեր երանգներ ունի, որոնցից մեկն է լինում գերակա, եւ Թուրքիայում հենց թուրքական երանգն է գերակշռում»:

Վերին եւ ներքին ինքնության խնդիրը գնալով մեծ ծավալներ ընդգրկեց Թուրքիայում, իսկ վարչապետի արտահայտությունները պատճառ դարձան լուրջ քննարկումների, որոնք էլ իրենց հերթին ցույց տվեցին խնդրի կարեւորությունը եւ արդիականությունը: Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») նախագահ Դեւլեթ Բահչելիհ, դեմ արտահայտվելով մոզաիկայի տարբերակին, մշել է, որ եթե Թուրքիան մոզաիկա է, ապա այդ երկրի անունը պետք է լինի «Մոզաիկիստան», «սակայն քանի որ Թուրքիա ենք ասում, ապա այս անունը թուրք ազգից է ծագում», – մշել է նա: Բողազիչի համալսարանից դոկտոր, պրոֆեսոր Ջաֆեր Ուսքյուլը, ծշմարիտ համարելով, որ գոյություն ունի ներքին ինքնություն, սահմանել է մի իրականություն՝ այն է. «Այդ ներքին ինքնությունները քաղաքական իրավունքներ չունեն: Քաղաքական բնագավառում պետությունը մեկ ինքնություն ունի, եւ Թուրքիայի Հանրապետության քաղաքացիության հովանու տակ պետք է կարողանալ պաշտպանել էթնիկ ինքնությունը, մշակութային իրավունքները: Այս ամենը չի կարող հանգեցնել պետության մասնատման, դաշնային մի կառույցի վերածվելու մտքին»:

Սակայն այն դեպքը, որը տեղի ունեցավ բոլորովին վերջերս Թուրքիայում, ընդամենը մեկն է այն ապացույցներից, որ այդ տարբեր էթնիկ խմբերին թույլ չի տրվում պահպանել անգամ իրենց «ներքին ինքնությունը» եւ մշակութային արժեքները: Նրանց այդ բոլոր ձգտումները բուռն

հակազդեցության են հանդիպում ինչպես հասարակության, այնպես էլ պետական տարբեր կառույցների կողմից: Այսպես, սույն թվականի օգոստոս ամսին Ռիզեուս ծրագրված էր անցկացնել «Յեշիլչայ Յայլա» փառատոնը, որն ունի հիմնականում մշակութային ուղղվածություն եւ ներկայացնում է Սեւ ծովի արեւելյան ափերում ապրող ժողովուրդների բանահյուսական, մշակութային ժառանգությունից դրվագներ: Սակայն դրա հետ կապված որոշ շրջանակներ, հատկապես ազգայնամոլական, աղմուկ բարձրացրին՝ հայտարարելով, թե տարբեր պատրվակներով, այդ թվում եւ փառատոնի, դրսի ուժերը, որոնք կապված են հայկական որոշ կենտրոնների հետ, ցանկանում են «հայկական քարոզչություն» անել: Որպես դրա ապացույց էր նշվում այն, որ հիշյալ փառատոնի հովանավորներից՝ ամերիկյան The Christensen Fund կազմակերպությունն, իբրեւ թե, կապ ունի հայկական սիյուռքի տարբեր կառույցների հետ: Եւթյամբ տոտալիտար, բայց ժողովրդավար ձեւացող համակարգերին հատուկ միջոցներով կազմակերպվեց մի ակցիա, եւ «հայկական քարոզչությամբ» «մտահոգ» մի խումբ քաղաքացիներ դիմեցին Համշենի գավառապետարան՝ խնդրելով չեղյալ հայտարարել հիշյալ միջոցառումը: Գավառապետարան դիմած «մտահոգ» քաղաքացիների խնդրանքին տեղական իշխանությունները դրական արձագանք տվեցին, եւ փառատոնի Համշենի մասը չեղյալ հայտարարվեց: Համշենցիների անունից գավառապետարան դիմած Իսմաիլ Ջիհանն ասում է. «Ես ուսումնասիրել եմ այս փառատոնի հովանավոր ամերիկյան կազմակերպության կանոնադրությունը: Որպես նպատակ է նշվում ազգագրական թանգարան բացելը, որի համար պետք է աշխատանք տանել եւ փաստեր հավաքել: Այստեղի տեղանունները, ճաշերի անունները, համշենցիների օգտագործած որոշ բառերը հավաքում եւ գրանցում են: Այս փառատոնը կազմակերպվում է, որպեսզի համշենցիներին ասեն, որ նրանք թուրք չեն»:

Փառատոնի հետ կապված՝ հանդես է եկել նաեւ Ռիզեի նահանգապետ Քասըմ Էսենը եւ ասել, որ իրենք հետեւում են Սեւ ծովի արեւելքում թուրք ազգի միասնականության դեմ արվող ամեն քայլի:

Սակայն, չնայած այս ամենին, փառատոնը, ի վերջո, տեղի է ունեցել, բայց ոչ թե Համշենում, այլ Ֆընդըքըլը քաղաքում եւ բավական լավ ընթացք է ունեցել: Փառատոնի կազմակերպիչներից «Գոլա» մշակույթի, արվեստի եւ բնապահպանության միության ներկայացուցիչ Նիլուֆեր Թաշքընը նշել է, որ այդ փառատոնը կազմակերպվում է արդեն 3 տարի եւ նպատակն է աշխարհին ներկայացնել մերձսեւծովյան տարածքների էկոլոգիական հարստությունները եւ մշակույթը, իսկ «հայկական քարոզչության» հետ կապված պնդումները հրապարակ են նետվել միտումնավոր: Փառատոնի կազմակերպիչները, ըստ երեւույթին, ծանոթ եւ վարժված լինելով

այսօրինակ դրսևւորումներին՝ չեն ընկրկում եւ պատրաստ են շարունակել իրենց գործը:

Ամենատարածված մեղադրանք-ասելոսեն այն էր, որ այդ փառատոնի նպատակն է քարոզել հայկական մշակույթ եւ հայտարարել, թե «համշենցիները հայ են»: Այս պնդման համար պատճառ է հանդիսացել «Յելեսա» երաժշտական խումբը, որի երգացանկի մեջ կան տարածքի տարբեր ժողովուրդների լեզուներով երգեր, այդ թվում եւ Յամշենի բարբառով: Ի դեպ, սույն թվականի հուլիսին Երեւան այցելած համշենական «Վովա» խմբի հետ էր նաեւ «Յելեսա»-ի ղեկավար եւ երգչուհի, համշենցի Այշենուր Քոլիվարը: Այսինքն՝ նման «հիստերիայի» իրական պատճառներից է Յամշենի՝ ակնհայտ հայկական բարբառի օգտագործումը, եւ, փաստորեն, սա փոքրամասնութիւնների մայրենի լեզվի դեմ դարերով տարվող քաղաքականութան դրսևւորումներից է: Ավելորդ չէ նշել կրկին համշենցի ռեժիսոր Օզջան Ալիերի՝ Յամշենի բարբառով նկարահանված «Մոմի» (Յամշենի բարբառով՝ «Տատիկ») կարճամետրաժ ֆիլմից հետո ծայր առած հալածանքի դրսևւորումները, որոնցից էր, օրինակ, դատական գործի հարուցումը երիտասարդ ռեժիսորի նկատմամբ: Նրա հիմնական «մեղքը» ֆիլմում Յամշենի բարբառի օգտագործումն էր, որի տակ շատերն այլ ենթատեքստ էին փնտրում: Յարցաքննել են նաեւ ֆիլմի գլխավոր «հերոսուհուն», տարեց կնոջը՝ մոմիին, որն ասել է, թե դա իր մայրենի լեզուն է: Ի վերջո, ֆիլմի լեզուն պարզելու համար դատարանը ֆիլմն ուղարկել է անգամ փորձաքննութան, եւ պատասխանը եղել է այն, որ համշեներեն կոչվածն իրականում հայերենի մի բարբառ է:

Վերոհիշյալ փառատոնի ժամանակ «հայկական քարոզչութան» գաղափարը տարածեց եւ միգրցե առաջինը հրապարակ նետեց «Գորշ գայլերի» խոսափող «Յենի չաղ» թերթը՝ «Փառատոնի դիմակով հայկական քարոզչութուն» վերնագրով հողվածով: Յենց այդ հողվածում էր ասվում, թե իբր հայկական սփյուռքի հետ կապ ունեցող The Christensen հիմնադրամը 220 հազար եվրո է հատկացրել փառատոնի կազմակերպման գործին: Թերթի փոխանցմամբ՝ «վրդոված քաղաքացիները «Յամշենցիները հայ են» քաջոզչութանն ի պատասխան հայտարարել են, թե «համշենցիները թուրքական ցեղ են»: Յողվածում մի քանի հասարակական կազմակերպութիւնների ղեկավարներ մտահողութիւն են հայտնել Սեւ ծովի արեւելյան շրջաններում տարվող «միսիոներական գործունեութան» առիթով: Օրինակ, Փազար քաղաքի կրթութան հիմնադրամի նախագահ Ջեւաթ Չիչեքը նշել է. «Խոսում են կորուսյալ հայկական մշակույթից եւ ժառանգութիւնից: Աշխատում են Սեւ ծովի արեւելյան շրջաններում էթնիկ անջատողականութիւն հրահրել»: Իսկ Ռիզեի հասարակական կազմակերպութիւնների միութան նախագահ Բահաթին

Քարագյոզն ասել է. «Սեւ ծովի արեւելքում հայկական «արմատ» փնտրողները, միջազգային ասպարեզում այս փաստերը եւ տեղեկությունները օգտագործելով, այն թեզն են առաջ տանելու, թե՛ «տեսեք, Սեւ ծովի արեւելյան մասում հայկական մշակույթ կա»:

Այս ամենը ցույց է տալիս, որ թուրքական իշխանությունների՝ թեկուզ «ներքին ինքնությունը» հարգելու հայտարարություններն ընդամենը խոսքեր են, իսկ իրականում բուռն կերպով շարունակվում է էթնիկ տարբեր խմբերի լեզուները, մշակույթները մոռացության տալու քաղաքականությունը: Եվ մարդկանց իրական էթնիկ ինքնությունը մոռացության տալու գործում թուրքական իշխանությունները դիմում են տարբեր միջոցների, անգամ օգտագործում են ծագումով համշենցիներին: Իսկ վախի մթնոլորտում ապրող համշենցիների մեջ տեղի են ունենում տարբեր գործընթացներ՝ երբեմն նաեւ իրական ինքնության գիտակցված մերժում: Այս երեւույթը դիպուկ բնորոշեց մեր համշենցի ծանոթներից մեկը. «Համշենցիների մի մասը հենց հայերենով է ժխտում իր հայկական ծագումը»:

ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ **Մահիր Օզքան**

Թուրքիայում բնակվող համշենցի Մահիր Օզքանին կարելի է համարել համշենական մտավորականության ներկայացուցիչ: Ներկայումս նա զբաղվում է մանկավարժությամբ եւ դասավանդում դպրոցում: Վերջերս թուրքական մամուլում տպագրված նրա հոդվածը, որը վերաբերում է համշենցիների ինքնության խնդիրներին, որոշ կրճատումներով թարգմանաբար ներկայացնում ենք ստորև:

Համշենցիները ժողովուրդ են, որ պատմության ընթացքում մի շարք տրավմաներ են կրել: Ամիջականորեն իրենց հետ եւ իրենց շուրջ զարգացող դեպքերի ազդեցությունը կրում են որպես մի մեծ բեռ: Սրա ամենակարեւոր ապացույց պետք է համարել համշենցիների ինքնության հետ կապված՝ նույնիսկ ամենափոքր քննարկման ժամանակ, նրանց ցուցաբերած արծազանքը: Համշենցիները, ծուլման գործընթացին զուգահեռ՝ ինքնության լուրջ ձեւափոխում են ապրում: Համշենցու համար մուսուլմանություն ընդունելը առաջին մեծ տրավման էր, երկրորդը՝ 1915թ. կոտորածը: Երրորդը, կարելի է ասել, Համշենից արտագաղթերի առաջացրած մասնատվածությունը եղավ:

Այս ամենը գումարվեց Թուրքիայի Հանրապետության՝ բոլոր ինքնությունները մերժող եւ Օսմանյան կայսրության մնացուկ այն հասկացության հետ, համաձայն որի՝ բոլոր մուսուլմաններին թուրք են համարում: Եթե դրան ավելացնենք այն փաստը, որ համշենցիներին հայ են կոչում՝ որպես հայիոյանք, ապա պարզ կդառնա, որ համշենցիները, համեմատաբար փոքր ժողովուրդ լինելով, գրեթե չէին կարող ինքնության վերափոխում չապրել:

Համշենցիները ոչ միատարր նկարագիր ունեն: Մինչ օրս Համշենի պատմության եւ մշակույթի մասին արված հետազոտություններից պարզ է դառնում, որ դրա պատճառը, պատմական լինելուց ավելի, սոցիալ-հոգեբանական է:

Համշենցիների ինքնության դրսեւորումները

Չուլված ինքնություն. Այս խումբն առավելապես կորցրել է կապն իր մշակութային արժեքների հետ կամ էլ դրանք պահել, սակայն լոկ պարզ

քանահյուսական մակարդակով: Ինտեգրված են թուրք ժողովրդի հետ: Նրանց զգալի մասը սկսել է ապրել մեծ քաղաքներում: Այս խմբի մեծ մասը Ռիզե Չամչենից (Բաշ Չամչենից) է, սակայն կարելի է հանդիպել Չամչենի այլ վայրերում եւս: Նրանք իրենց առավելապես թուրք են համարում եւ ապրում են որպես թուրքեր: Այս խմբում էթնիկ ծագման մասին առկա է տգիտության հասնող լուրջ անտեղյակություն: Ոմանց մեջ եթե հոգու խորքում դեռեւս հայկական ծագման վերաբերյալ աղոտ մտքեր կան էլ, ապա ձգտում են արագ ձերբազատվել դրանցից եւ տեղավորվել մուսուլման թուրքի ինքնության մեջ:

Մերժողական ինքնություն. Իրենց հայկական ինքնությունը գաղտնի իմանալով հանդերձ՝ արտաքին աշխարհին, իրենց երեխաներին ու շրջապատին գիտակցաբար սուտ են ասում: Թաքցված ինքնություն է եւ հակված է ձուլվելու, սակայն դեռ շատ ուժեղ մշակութային կապերի պահպանումը խանգարում է լիակատար ծուլմանը: Այս խմբում կան նաեւ միկրոազգայնական հայացքների ձեւավորման նախադրյալներ: Այս ինքնությունը Չոռմի պապից ավելի կաթոլիկ լինելով՝ երբեմն վերափոխվում է թուրքական ազգայնականության եւ վերածվում միկրոազգայնական համշենցու: Այս հակասությունները միեւնույն ժամանակ ցույց են տալիս, որ խմբում դեռեւս առկա է առերեսվելու եւ հակասություններից ձերբազատվելու հնարավորություն: Սա համշենցիների ամենամեծաթիվ խումբն է, եւ հնարավոր է հանդիպել բոլոր տեղերում, որտեղ ապրում են համշենցիներ:

Անտարբեր ինքնություն. Ինքնություն, որը տարբեր պատճառներով չի հետաքրքրվում խնդրով (հայկական ծագմամբ- Ռ.Մ.): Նրանք գիտեն իրենց հայկական ծագման մասին եւ ընդունում են, սակայն անմիջապես, հայտնի փաստարկներով, ձգտում են ազատվել այս ինքնությունը կրելու բեռից: Ամենակարելիոր եւ տարածված փաստարկներից մեկը հետեւյալն է. «Անատոլիայում ապրող մի շարք ժողովուրդներ կային, եւ նրանք բոլորը միասին ազատագրական պատերազմ են վարել եւ ձեւավորել թուրք ազգը: Ինչ ծագում ուզում ես ունեցիր՝ արդեն սա ոչ մի նշանակություն չունի»: Այս արտահայտությունը, որն ավելի շատ միտված է մերժողականությանը փոքր-ինչ խելամիտ երանգ հաղորդելուն, որքան էլ զարմանալի է, տարածված է մտավորական շրջանակներում: Տարածված է նաեւ այն միտքը, որ իմաստ չունի էթնիկ ինքնությունն առաջ տանել. ավելի մեծ խնդիրներ ունենք, կարելորդ տնտեսությունն է, գործազրկությունը, նախ՝ թող փորդ կուշտ լինի, ինքնությունը կարելորդ չէ: Իրականում սրա բուն նպատակը հարցի ծանրությունից խուսափելն է, քանի որ տնտեսության հետ կապված դժվարությունները մյուս հարցերը չեն վերացնում:

Մյուս տարածված տեսակետը, որը ժխտողականությունը եւ անտարբերությունը մեղմելուն է միտված, գործածվում է հատկապես կրոնական կրթություն ստացած հատվածի կողմից, այն է՝ բոլորս մուսուլման ենք: Ըստ նրանց, կարող ես ունենալ հայկական էթնիկ ծագում, սակայն կարելորդ ոչ թե էթնիկ, այլ կրոնական ինքնությունն է: «Բացի այդ, մենք հայերից ավելի շատ թուրքերին ենք նման», – գտնում են նրանք: Այս արտահայտությամբ եւս ձգտում են մեղմել ժխտումը: «Օրինակ, պատմության ընթացքում երբեք իսլամը յուրացրած հայ ժողովրդի չենք հանդիպել, հակառակը՝ գիտենք, որ նրանք մուսուլմանների եւ իսլամի դեմ թշնամական մոտեցում են որդեգրել: Մինչդեռ մենք՝ համշենցիներս, փառք Աստծո, մուսուլման ենք եւ մուսուլման էլ կմնանք»: Ի վերջո, հայկական ծագում ունենալու մասին իրականում տեղյակ այս խումբը տարբեր ձեւերով հասնում է էթնիկ ծագմանը կարելորդություն չտալուն եւ ժխտելուն: Սակայն նրանց մեջ անհանգիստ հոգեվիճակը շարունակաբար զգացվում է:

Առերեսման պատրաստ ինքնություն. Սա մի ինքնություն է, որն իր ծագման մասին որեւէ տեղեկություն իմանա, թե չիմանա էլ՝ պատրաստ է ընդունել իր ինքնությունը: Նպատակն է՝ իմանալ իրականությունը: Ցանկանում է ինքնարտահայտվել՝ իրեն ստիպված չհամարելով թաքցնել ինքն իրեն կամ տարբեր դերերի մեջ մտնել: Նույն կերպ ցանկանում եւ պաշտպանում է նաեւ բոլոր ժողովուրդների ազատ ինքնարտահայտվելու իրավունքը: Ինքն իրեն արտահայտելը համարում է ոչ թե ազգայնականություն, այլ եղբայրաբար համատեղ ապրելու պայման: Հավատում է, որ բարոյյթներ չունեցող, իրենց անցյալի հետ առերեսված մարդիկ եւ հասարակությունները կարող են առողջ ապագա ստեղծել:

Եզրակացություն

Սեւ ծովն արդեն սկսել է ինքն իր հետ առերեսվել: Արդեն մեր ժողովուրդը՝ իր երաժշտությամբ, փառատոներով, ինտերնետով եւ այլ միջոցներով ինքնարտահայտվում է: Սակայն դեռեւս մեր ամենակարեւոր խնդիրն անտեղյակությունն է: Համշենցիները ըրպե առաջ պետք է հրաժարվեն իրենց ինքնությունը ժխտելուց եւ լծվեն կորստի եզրին հասած մշակութային տարրերը հավաքելու, իրենց արժեքները փրկելու գործին:

*Թուրքերենից թարգմանեց
Ռուբեն Մելքոնյանը*

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆ – ԱՐԵՎՍՈՒՏՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սեւակ Սարուխանյան

2009 թվականի հունիսին Իրանում կայանալու են նախագահական ընտրություններ, որոնք կարելի է նշանակություն կունենան Իրանի ներքին եւ արտաքին քաղաքականության համար: Բացառություն չեն կարող կազմել նաեւ Իրանի հարաբերությունները Արեւմուտքի՝ ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի հետ, որոնցում վերջին շրջանում որոշակի դրական զարգացումների միտումներ են գրանցվել:

Իրան – ԱՄՆ

2008թ. հուլիսին Իրանի փոխնախագահ Ի.Մաշաին զբոսաշրջության հարցերին նվիրված միջազգային կոնֆերանսի ժամանակ արեց մի հայտարարություն, որի քննարկումը մինչեւ օրս կարելի է տեղ է զբաղեցնում Իրանի ներքաղաքական գործընթացներում եւ տեղեկատվական դաշտում: Նա հայտարարեց. «Աշխարհի ոչ մի ազգ մեզ թշնամի չէ. Իրանը ԱՄՆ եւ Իսրայելի բարեկամն է եւ հարգում է այս պետություններին: Մենք գտնում ենք, որ ամերիկացիներն աշխարհի մեծագույն ազգերից են»:

Իրանի փոխնախագահի հայտարարությունը բավական հետաքրքիր է երկու առումներով: Առաջին՝ փոխնախագահ Ի.Մաշաին նախագահ Մ.Ահմադինեժադի յուրայիններից է, եւ այս տեսակետից նրա հայտարարությունը առավել քան տարօրինակ պետք է համարել: Երկրորդ՝ Ի. Մաշաին, փաստորեն, ճանաչեց Իսրայել պետության գոյությունը, ինչը հակասում է Իրանի արտաքին եւ տարածաշրջանային քաղաքականությանը:

Չնայած քիչ ավելի ուշ Իրանի փոխնախագահը հայտարարեց, որ իր բառերը սխալ են հասկացվել, թե՛ Ի.Մաշաին, թե՛ Մ.Ահմադինեժադին ուղղված քննադատությունների տարափը չպակասեց: Որոշ իրանական թերթեր եւ վերլուծաբաններ սկսեցին կարծիք տարածել, թե փոխնախագահի հայտարարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների լավացման նպատակով ընթացող գործընթացների հետեւանք: Յարաբերությունների լավացման հնարավորության մասին, ըստ իրանա-

կան թերթերի, խոսում է նաեւ այն, որ Մ.Ահմադինեժադը ոչ միայն չքննադատեց իր տեղակալի հայտարարությունը, այլ սկսեց պաշտպանել նրան՝ իր հերթին ասելով, թե Մաշախի խոսքերը սխալ են ներկայացվել:

Օգոստոսին ԱՄՆ-ի հետ հարաբերությունների լավացման Իրանի քաղաքականության մասին քննարկումները նոր թափ առան այն բանից հետո, երբ Թուրքիայի վարչապետ Ռ.Էրդողանի հետ բանակցություններից հետո Մ.Ահմադինեժադը սենսացիոն հայտարարություն արեց այն մասին, որ ամերիկյան ռազմական ուժերի ներկայությունն Իրաքում կայունացնող նշանակություն ունի թե՛ Իրաքի եւ թե՛ տարածաշրջանի համար:

Սեպտեմբերին Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադի այցը ԱՄՆ աչքի ընկավ ոչ միայն Բուշի վարչակարգի քաղաքականության քննադատությամբ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի նիստում եւ CNN հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ, այլ նաեւ նրանով, որ իրանական մամուլում «սիոնիստների բարեկամ» եւ «դավաճան» պիտակներով ներկայացվող փոխնախագահ Ի.Մաշախն նախագահի կողմից ընդգրկվել էր իրանական պաշտոնական պատվիրակության կազմում եւ մասնակցում էր Իրանի նախագահի բոլոր հանդիպումներին:

Այստեղ հարկ է նշել, որ Ի.Մաշախի ընդգրկումն իրանական պատվիրակության մեջ տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Իրանի հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեին պաշտոնապես «քննադատեց» Իրանի փոխնախագահին: Սեպտեմբերի 19-ին, ուրբաթյան աղոթքից հետո, Ա.Խամենեին անդրադարձավ Ի.Մաշախի հայտարարությանը եւ այն բնութագրեց որպես «սխալ»: «Սխալ» բառի ընտրությունը բավական խորհրդանշական է, քանի որ Իրանի հոգեւոր առաջնորդը երբեք չի վարանել ավելի կոշտ բնութագրումներ տալ իրանական քաղաքական գործիչներին՝ համեմատաբար մեղմ հայտարարություններով հանդես գալու պատճառով: «Դավաճանություն» բառով Խամենեին մի քանի անգամ գնահատել է իրանական «բարեփոխիչների» առաջարկները Արեւմուտքի հետ հարաբերությունների լավացման վերաբերյալ: Իսկ Մաշախի հայտարարության պարագայում առաջին անգամ գործ ունենք իրանական բարձրաստիճան պաշտոնյայի կողմից Իսրայել պետության ճանաչման մասին հայտարարության հետ, եւ այս ամենին Ա.Խամենեին արձագանքում է շատ մեղմ քննադատությամբ: Սա կարող է խոսել այն մասին, որ իրանական ղեկավարության կողմից Արեւմուտքի հետ հարաբերությունների լավացման մասին քննարկումները կարող են համապատասխանել իրականությանը:

Միեւնույն ժամանակ, վերջին ամիսներին հետաքրքիր զարգացումներ տեղի ունեցան ռուս-իրանական հարաբերություններում, որոնք անուղղակի կապ ունեն նաեւ ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ: Հուլիսին «FOX News» ամերիկյան հեռուստաընկերությունը հաղորդագրություն հեռարձակեց այն մասին, որ ռուսական «Ալֆա-Գրուպ» ֆինանսարդյունաբերական խոշոր ընկերությունը սկսել է մեծ ներդրումներ իրականացնել Իրանում: Մասնավորապես, ռուսական ընկերությունը սկսել է գնել հաղորդակցային ոլորտում աշխատող իրանական կազմակերպությունները: Այս լուրերը պաշտոնապես հաստատվեցին Մոսկվայում, երբ հոկտեմբերին ՌԴ նախագահ Դ.Մեդվեդեւի ու «Ալֆա-Գրուպի» նախագահ եւ հիմնական սեփականատեր Մ.Ֆրիդմանի հանդիպման ժամանակ վերջինս հայտարարեց, որ իր ընկերությունը պատրաստվում է ներդրումային էքսպանսիայի Իրանում եւ Աֆղանստանում: Այստեղ հիմնական ուշագրավ փաստն այն է, որ Մ.Ֆրիդմանը, ով, ըստ «Forbes»-ի՝ ունի 20,8 մլրդ ԱՄՆ դոլարի կարողություն, ըստ որոշ տեղեկությունների, միաժամանակ Ռուսաստանի եւ Իսրայելի քաղաքացի է: Բացի դրանից, Մ.Ֆրիդմանը Ռուսաստանի հրեական կոնգրեսի փոխնախագահն է, ֆինանսավորում է հրեական հումանիտար ծրագրերի մեծ մասը Ռուսաստանում, «TNK-BP» նավթային ընկերության խոշոր սեփականատեր է: Նա, միեւնույն ժամանակ, 2007 թվականից խոշոր ներդրումներ է կատարում բուն Իսրայելում, անմիջական շփումներ ունի Շ.Պերեսի, Բ.Նաթանյահուի, Ա.Լիբերմանի եւ Է.Օլմերթի հետ:

Այս պարագայում Մ.Ֆրիդմանի բազմամիլիարդ ներդրումներն Իրանում բավական տարօրինակ կարող են թվալ: Միեւնույն ժամանակ, ուշադրության է արժանի նաեւ Իրանի դիրքորոշումը «Ալֆա-Գրուպի» ներդրումների խրախուսման տեսանկյունից, քանի որ Մ.Ֆրիդմանն իր գործունեության բնույթով եւ ուղղվածությամբ Իրանի քարոզչության համար հարազատ «հրեական լոբբի» հասկացության դասական մարմնավորումն է Ռուսաստանում: Հրեական ներդրումների հոսքը Իրան միայն Թեհրանի հետ հարաբերությունների խորացման մեջ Կրեմլի հետաքրքրվածությամբ բացատրելը, թերեւս, սխալ է: Մեր կարծիքով, դրա բացատրությունը պետք է փնտրել նաեւ այն մասնակի դրական տեղաշարժերում, որոնք վերջերս ի հայտ են եկել Իրան-Արեւմուտք հարաբերություններում:

Իրան – ԵՄ

Վերջին երկու ամիսների ընթացքում Իրան–ԵՄ հարաբերություններում նկատվում են որոշակի դրական տեղաշարժեր: Դրանք, հիմնականում, կապված են այն քաղաքական իրավիճակի հետ, որը ձեւավորվել է Հարավային Կովկասում վրաց-ռուսական հակամարտության պատճառով:

Վրաց-ռուսական կոնֆլիկտը տարածաշրջանում ստեղծել է մի իրավիճակ, որն անմիջականորեն առնչվում է Հարավային Կովկասում իրականացվող բոլոր էներգետիկ նախագծերի հետ: Բացառություն չի կազմում «Նաբուքքո» գազատարի նախագիծը, որի իրագործումը կարելու է նշանակություն ունի ԵՄ էներգետիկ անվտանգության ապահովման տեսանկյունից: Ակներեւ է, որ վերջին իրադարձություններից հետո դժվար թե Վրաստանն ընկալվի որպես Կասպիցի շրջանից նավթի եւ գազի արտահանման կայուն հանգույց:

Այս տեսանկյունից «Նաբուքքո» նախագծի ապագան սկսել է ավելի սերտ կապվել Իրանի հետ գազի ոլորտում համագործակցության հաստատման հետ: Հարկ է նշել, որ բանակցությունները եվրոպական եւ իրանական կողմերի միջեւ նոր թափ են առել վերջին շաբաթների ընթացքում: Այսպես, հոկտեմբերի 5-ին ելույթ ունենալով Թեհրանում էներգետիկ անվտանգության հարցերին նվիրված կոնֆերանսում, ավստրիական OMV գազային ընկերության նախագահ Մ.Պայսերը հատուկ ընդգծեց, որ ապագայում Իրանը պետք է կարելու էր խաղաղ գազի համաշխարհային արտադրության մեջ, եւ «Նաբուքքոն» տալիս է դրա լավ հնարավորությունը»:

Նշենք, որ հենց ավստրիական OMV ընկերությունն է «Նաբուքքո» նախագծի հիմնական իրագործողը, եւ հավանաբար հենց նա էլ գազատարի կառուցումից հետո կստանձնի դրա շահագործման եւ ղեկավարման դերը:

Նույն հոկտեմբերի 5-ին թուրքական BOTAS գազային ընկերության նախագահը հայտարարեց, որ «Նաբուքքոն» պետք է «հայացքը թեքի» դեպի նոր երկրներ, առաջին հերթին՝ դեպի Իրան: OMV եւ BOTAS ընկերությունների ղեկավարների հայտարարություններից երկու օր անց դրանց արձագանքեց ԱՄՆ Պետքարտուղարի տեղակալի օգնական Մ.Բրայզան, ով ասաց, որ Վաշինգտոնը կտրականապես դեմ է, որպեսզի «Նաբուքքոն» օգտագործվի իրանական գազը ԵՄ տեղափոխելու նպատակով:

Չնայած ամերիկյան կողմի բացասական արձագանքներին, եվրոպական ընկերությունները շարունակում են բանակցություններն իրանական կողմի հետ՝ վերջինիս «Նաբուքքո» նախագծին միանալու նպատակով: Կարելի է ենթադրել, որ դրական արդյունքների արձանագրումը իրանա-եվրոպական բանակցություններում մեծ մասամբ կախված է նաև Վրաստանի ապագայից: Եթե Վրաստանը չկարողանա վերականգնել սեփական կայունությունը եւ սկզբունքորեն լուծել Ռուսաստանի հետ խնդիրները, ապա Իրանի եւ նրա գազի նշանակությունը կտրուկ կաճի ԵՄ-ի համար:

Ինչեւէ, կարելի է արձանագրել, որ Իրան-Արեւմուտք հարաբերություններում նկատվում են որոշակի տեղաշարժեր: Դրանք դեռեւս բավարար չեն, որպեսզի հնարավոր լինի ենթադրություն անել, թե հարաբերությունները գնում են դեպի կտրուկ լավացում: Սակայն հարաբերությունների բարելավման համար ներկայումս առկա են որոշակի հիմնավոր նախանշաններ:

ԻՐԱՆ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀԵՏ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐԵՒՆ

Սարգիս Հարությունյան

Թեև Վրաստանի շուրջ ընթացող զարգացումները, կարծես, երկրորդական պլան մղեցին վերջին տարիների միջազգային կարեւորագույն հարցերից մեկը՝ իրանականը, բայց լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ առաջիկայում մենք դարձյալ կլսենք Իրանի մասին: Այս անգամ, սակայն, առաջնայինը չի լինի իսլամական հանրապետության միջուկային ծրագիրը, ոչ էլ Իրաքի հարցում Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ ընթացող բանակցությունները: Արդեն այսօր առկա նշանները վկայում են, որ Իրանն Արեւմուտքի հետ էներգետիկ ռազմավարական պայմանավորվածության ճանապարհին է, իսկ Վրաստանի շուրջ իրադարձությունները միայն արագացրին այդ գործընթացը:

Այդ իմաստով, 2007թ. երկրորդ կեսից սկսված ամերիկա-իրանական բանակցությունների եւ այսօր էլ շարունակվող պայմանավորվածությունների գլխավոր արդյունքը, թերեւս, պետք է սպասել հենց էներգետիկ ոլորտում:

Իրավիճակային վերլուծություն

Վերջին շաբաթների ընթացքում ուշագրավ հրապարակումներ եղան Իսրայել – Իրան ռազմաքաղաքական դիմակայության շուրջ: Սեպտեմբերի 26-ին բրիտանական «The Guardian»-ը գրեց, թե 2008թ. մայիսի 14-ին Իսրայելի անկախության հռչակման 60-րդ տարեդարձի կապակցությամբ երուսաղեմում գտնվող ԱՄՆ նախագահը հայտնել է պաշտոնական թեւ Ավիվին, որ եթե իրեական պետությունը հարձակվի Իրանի վրա, ապա Վաշինգտոնը չի աջակցի Իսրայելին: Պարբերականի ներկայացմամբ, Բուշ-կրտսերը նաեւ նշել է, թե ինքն իր դիրքորոշումը չի փոխի մինչեւ իր նախագահության ավարտը՝ 2009թ. հունվար:

Հոկտեմբերի 5-ի իսրայելական «Haaretz»-ի ներկայացմամբ, տարածաշրջան այցելած Ֆրանսիայի արտգործնախարար Բեռնար Կուլշները կոչ է արել Թեւ Ավիվին ձեռնպահ մնալ Իրանի դեմ ռազմական ակցիայից: Իսկ հաջորդ օրը՝ հոկտեմբերի 6-ին, իսրայելական մեկ այլ լրատվամիջոց՝ «Channel-10» հեռուստաընկերությունը, հիմնվելով անանուն դիվանա-

գիտական աղբյուրների վրա, հրապարակեց մի տեղեկություն, ըստ որի՝ Միացյալ Նահանգները հայտարարել է Իսրայելին, թե թույլ չի տա, որպեսզի այն հարձակում գործի Իրանի նկատմամբ, քանի որ այդպիսով վտանգի տակ կհայտնվեն Իրաքում եւ Աֆղանստանում գործող ամերիկյան զորամիավորումները:

Ներկայացվածն ուշադրության է արժանի ոչ այնքան կոնկրետ իրադարձությունների կամ հայտարարությունների առումով, որքան նրանով, որ Վաշինգտոնում ու Եվրոպայում որոշել են փոփոխություններ մտցնել Իրանի նկատմամբ տարվող տեղեկատվական քաղաքականության մեջ: Պատահական չէ, որ վրաց-ռուսական պատերազմից հետո Իրանի հասցեին Արեւմուտքից գրեթե չեն լսվում սպառնալից հայտարարություններ, ինչպես նախկին մի քանի տարիներին էր: Մինչդեռ, ողջ հարցն այն է, որ նման փոփոխությունները տեղի են ունենում Իրանի հետ առկա հիմնական միջուկային խնդրում որեւէ էական տեղաշարժի բացակայության պայմաններում¹: Հետեւաբար հարց է առաջանում՝ ո՞րն է պատճառը:

Հաջորդ կարելուր հանգամանքը, որի վրա հարկ է ուշադրություն դարձնել, Իրաքում, Աֆղանստանում եւ Պակիստանում ընթացող զարգացումներն են:

Իրաք. օգոստոսի 28-ին Իրաքի վարչապետ Նուրի ալ-Մալիքին հայտարարեց, թե Վաշինգտոնի հետ սկզբունքային պայմանավորվածություն է ձեռք բերվել, ըստ որի՝ մինչեւ 2009թ. հունիսը Իրաքում առկա ամերիկյան ռազմուժի հարվածային մասերը պետք է դուրս բերվեն քաղաքներից, իսկ մինչեւ 2011թ. ամերիկյան զորքերը պետք է ընդհանրապես թողնեն Իրաքը: Նույն օրը հայտնի դարձավ, որ Իրաքում գործող ու Իրանի աջակցությունը վայելող 60 հազ.-ոց «Մահդիի բանակը» դադարեցնում է իր գործունեությունը, իսկ շարժումը ձեւափոխվում է կրոնական-մշակութային միության²: Շատ չանցած՝ սեպտեմբերի 4-ին, Իրաքի կառավարությունը հայտարարեց, թե փակում է իր տարածքում գործող ու Թեհրանի վարչակարգին ընդդիմադիր իրանական «Մոջահեդին-է-Իսլաք» կազմակերպության ճամբարները:

Աֆղանստան. սեպտեմբերի 30-ին հայտնի դարձավ, որ Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայը հեռախոսային խոսակցություն է ունեցել «Թալիբան» շարժման առաջնորդ մոլլա Օմարի հետ, որի ժամանակ կոչ է արել նրան միանալ աֆղանական կառավարությանը՝ դադարեցնելով քաղաքացիական պատերազմը: Նույն օրը հայտնի դարձավ նաեւ, որ Մեծ Բրիտանիայի ու Սաուդյան Արաբիայի հովանավորությամբ Մեքքայում գաղտնի բանակցություններ են ընթացել Աֆղանստանի կառավարության

եւ «Թալիբան» շարժման ներկայացուցիչների միջեւ՝ փաստորեն, կռալիցիոն կառավարություն ձեւավորելու համար: Հոկտեմբերի 2-ին Կանադայի վարչապետ Սթեֆըն Հարփերը հայտարարեց, թե ՆԱՏՕ-ն չի կարող հավերժ մնալ Աֆղանստանում: Հարփերը նաեւ խոստացել է մինչեւ 2011թ. Աֆղանստանից դուրս բերել կանադական 2.500-ոց զորամիավորումը: Նույն օրը «The Times»-ը գրեց, թե Աֆղանստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Շերարդ Քաուփեր-Քոուլզը իր անհամաձայնությունն է հայտնել այդ երկրում արեւմտյան կռալիցիոն ուժերի ներկայության առնչությամբ եւ ասել, թե «Թալիբանի» դեմ ընթացող կամպանիան տապալվելու է, եւ իրավիճակից լավագույն ելքը կլինի Քաբուլում բռնապետի իշխանության գլուխ գալը: Երեք օր անց՝ հոկտեմբերի 5-ին, «The Sunday Times»-ին տված հարցազրույցի ժամանակ Աֆղանստանում բրիտանական զորքերի հրամանատար Մարկ Կարլտոն-Սմիթը հայտարարեց, թե «Թալիբանի» դեմ պատերազմը հնարավոր չէ հաղթել: Եվ վերջապես, հոկտեմբերի 9-ին ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը հանդես եկավ հայտարարությամբ, թե պաշտոնական Վաշինգտոնը դրականորեն կարծագանքի «Թալիբանի» հետ ձեռք բերվելիք համաձայնությամբ, եթե այն հանգեցնի Աֆղանստանում շարունակվող պատերազմի ավարտին:

Պակիստան. չնայած համարվում էր, թե Պակիստանի զինված ուժերի բարձրագույն հրամանատարությունում նստած են նախագահ Փերվեզ Մուշարաֆի մարդիկ, որոնց մի մասին նա նշանակել էր դեռ 2007թ., սակայն շատերի համար անակնկալ ձեւով ս.թ. օգոստոսի 18-ին Մուշարաֆը հայտարարեց իր հրաժարականի մասին: Սեպտեմբերի 6-ին կայացած նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ Պակիստանի նախկին վարչապետ Բենազիր Բհուտտոյի ամուսինը՝ Ասիֆ Ալի Ջարդարին: Իշխանափոխությունը Պակիստանում նշանավորվեց նաեւ ներքին անկայունության կտրուկ աճով, որի ցուցիչներից պետք է համարել սեպտեմբերին մի քանի անգամ տեղ գտած ամերիկյան ու պակիստանյան զինված ուժերի բախումները աֆղանա-պակիստանյան սահմանին, ինչպես նաեւ իսլամիստ ահաբեկիչների գործունեության կտրուկ ակտիվացումը երկրում³:

Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ ներկայացված երեք երկրներից (որոնք բոլորն էլ սահմանակից են Իրանին) առնվազն երկուսում ԱՄՆ-ի կողմից իրականացվող փոփոխությունները քիչ արդյունավետ կամ նույնիսկ անհնար կլինեն առանց Թեհրանի հետ համագործակցության: Մեծ է հավանականությունը, որ մենք գործ ունենք ամերիկա-իրանական բավական ընդգրկուն պայմանավորվածության հետ: Բայց կրկին

երեւան է գալիս վերը ներկայացված հարցը. եթե մենք էական տեղաշարժեր չենք տեսնում իրանական միջուկային խնդրում, ապա որ՞ն է այն հարցը, որի շուրջ պայմանավորվածությունը կբավարարի երկու կողմերին էլ:

Եվ վերջապես, զարգացումները բուն էներգետիկ ոլորտում: Հոկտեմբերի 4-5-ը թեհրանում տեղի ունեցավ Իրանից բնական գազի արտահանման հարցերի շուրջ բավական ներկայացուցչական համաժողով: Համաժողովն ուշադրություն գրավեց այն պատճառով, որ նրա հովանավորներն էին ֆրանսիական «Total» եւ ավստրիական «OMV» նավթագազային հսկաները:

Զնայած 1996թ. ԱՄՆ Կոնգրեսի ընդունած հանրահայտ ակտը («Iran–Libya Sanctions Act», «ILSA») պատժամիջոցներ էր սահմանել այն ընկերությունների համար, որոնք \$20 մլն-ից ավելի ներդրում կկատարեն իրանական էներգետիկ ոլորտում, սակայն հոկտեմբերի 4-5-ի համաժողովից զատ, անցած ողջ տարվա ընթացքում ուշագրավ նշաններ էին ի հայտ գալիս էներգետիկ ոլորտում արեւմտյան ընկերությունների եւ Իրանի միջեւ ծավալվող համագործակցության վերաբերյալ:

Ս.թ. հուլիսի 8-ին Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանին, հանդիպելով իրանական «Ամեւտրի խորհրդի» ղեկավարության հետ, հայտարարեց, թե օրինագիծ է պատրաստվում, որը կոչուրացնի օտարերկրյա ներդրումները երկրում: Իսկ հուլիսի 30-ին հայտնի դարձավ, որ Գերմանիայի Տնտեսության եւ արտահանման նկատմամբ վերահսկողության դաշնային կոմիտեն («BAFA») հավանություն է տվել, որպեսզի գերմանական «Steiner-Prematechnik-Gastec» ընկերությունը \$155 մլն-ի դիմաց Իրանի հարավում հիմնի հեղուկ գազի («LNG») արտահանման համար անհրաժեշտ տեխնիկական կարողություններ: Թեեւ գերմանական կողմի ներկայացմամբ, իրենք չեն խախտում «ILSA»-ն, քանի որ սարքավորումները հավաքվում են Գերմանիայում եւ հետո միայն արտահանվում Իրան, սակայն այդ գործարքը հստակ ազդանշան էր, որ Բեռլինը մտադրություն ունի խորացնել համագործակցությունը թեհրանի հետ գազային ոլորտում:

Պետք է նույն տրամաբանության ներքո դիտարկել նաեւ ընթացող ադրբեջանա-իրանական եւ թուրք-իրանական պայմանավորվածությունները նավթագազային ոլորտում: Հայտնի է, որ վրաց-ռուսական պատերազմի հետեւանքով օգոստոսի 25-ից Ադրբեջանն օրական մոտ 200 հազ. բարել նավթ է արտահանում միջազգային շուկա Իրանի միջոցով: Սեպտեմբերի 24-ին «The Financial Times»-ին տված հարցազրույցի ժամանակ Ադրբեջանի նավթային պետական ընկերության փոխնախագահ

Էլիար Նասիրովը հավաստիացրեց, որ Բաքուն շարունակելու է միջազգային շուկա նավթ արտահանել Իրանի տարածքով: Անշուշտ, կապված վրաց-ռուսական պատերազմի հետեւանքով Վրաստանի տարածքով անցնող նավթամուղների անապահով դառնալու եւ ժամանակ առ ժամանակ չաշխատելու հետ, Բաքվում նաեւ հարկադրված են եղել ռուսականի հետ միասին ընտրել իրանական ուղին, որպէսզի կարողանան արտահանել իրենց մոտ կուտակվող նավթը: Սակայն տրամաբանական է այն տեսակետը, որ պաշտոնական Բաքվի նման քայլերն աջակցություն են գտել նաեւ Ադրբեջանում գործող արեւմտյան ընկերությունների կողմից:

Ի դեպ, կարելի է նույն տարբերակն առանձնացնել նաեւ էներգետիկ ոլորտում ընթացող թուրք-իրանական բանակցությունների համատեքստում: Հայտնի է, որ անցած տարի Անկարան եւ Թեհրանը նախնական համաձայնության եկան \$3.5 մլրդ-ի հասնող մի նախագծի շուրջ, որը նախատեսում է իրանական «Հարավային Փարս» գազահանքից տարեկան մոտ 27 մլրդ մ³ գազ արտահանել Թուրքիա, իսկ այնտեղից էլ՝ Եվրոպա⁴: Դժվար թե առանց գազի ներմուծումից կախված եվրոպական երկրների հետ նախնական համաձայնության Թուրքիայի համար իմաստ ունենար նման ծավալի պայմանավորվածությունների հանգել Իրանի հետ:

Չեւտուրություններ

Ուշագրավ էր սեպտեմբերի 5-6-ը Լիբիայում գտնվող Քոնդուլիզա Ռայսի հայտարարությունը, թե Իրանն ու Յուսիսային Կորեան պետք է հետեւեն Տրիպոլիի օրինակին եւ սեփական միջուկային ծրագրերից հրաժարվելու դիմաց սերտ համագործակցություն հաստատեն Արեւմուտքի հետ: Հայտնի է, որ Արեւմուտք – Լիբիա հարաբերությունների նորմալացումից հետո վերջինս լուրջ պայմանագրեր է կնքել արեւմտյան մի շարք ընկերությունների հետ՝ իր նավթի ու բնական գազի պաշարների շահագործման վերաբերյալ:

Իհարկե, քիչ հավանական է, որ Իրանին սպասում է նույն տարբերակը: Չնայած հարուստ էներգետիկ պաշարներին, Իրանը սակավաթիվ երկրներից է, որի արտաքին քաղաքականությունը չի որոշվում էներգետիկ կարողությունների գործոնով: Բայց այդքանով հանդերձ, մենք, թերեւս, պետք է սպասենք էներգետիկ ոլորտում Իրան – Արեւմուտք լուրջ պայմանավորվածությունների ի հայտ գալուն: Պատճառները երկուսն են.

- Ներկայում բավական ակտիվ կերպով ընթացող ամերիկա-իրանա-

կան պայմանավորվածությունները, ըստ ամենայնի, էապես չեն անդրադառնում իրանական միջուկային ծրագրին, որն Իրանում շարունակում են դիտել որպես սեփական անվտանգության ապահովման թիվ մեկ միջոց: Յետեւաբար, միակ ոլորտը, որը կարող է սպասարկել նոր ձեռք բերվող Վաշինգտոն-Թեհրան պայմանավորվածությունը, էներգետիկան է:

- Վրաց-ռուսական պատերազմն արագացրեց սույն գործընթացը: Եթե նախկինում Չարավային Կովկաս–Կասպից–Կենտրոնական Ասիա էներգետիկ հոսքերի ճանապարհն էր դիտվում իբրև այլընտրանք Ռուսաստանին, ապա վրաստանյան իրադարձություններից հետո միակ տարբերակը հանդիսանում է Իրանը:

¹ Ս.թ. սեպտեմբերի 27-ին ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից Իրանի նկատմամբ ընդունված նոր՝ թվով հինգերորդ, բանաձեւը դրա լավագույն վկայությունն է: Բանաձեւը, կոչ անելով Թեհրանին դադարեցնել ուրանի հարստացումը եւ սահմանափակումներ մտցնել հրթիռային ծրագրում, որել նոր պատժամիջոցներ չի սահմանում իսլամական հանրապետության նկատմամբ:

2 Այդ հայտարարությունն արել է «Մահդիի բանակի» հրամանատար, Իրաքի շիա ազդեցիկ գործիչներից մեկը հանդիսացող Մոքթադա ալ-Սադրը, ով ամերիկյան աղբյուրների ներկայացմամբ՝ հաստատվել է Թեհրանում:

3 Ս.թ. սեպտեմբերի 22-ին Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադում գտնվող «Marriott» հյուրանոցի պայթեցման հետեւանքով զոհվեցին ավելի քան 50 հոգի, վիրավորվեցին մոտ 200-ը:

4 Բանակցությունները շարունակվում են, եւ հոկտեմբերի 8-ին Թուրքիայի էներգետիկայի նախարար Յիլմի Գյուլերը հայտարարեց, թե պայմանագրի տեքստի պատրաստ լինելուն պես ինքը կմեկնի Թեհրան՝ այն ստորագրելու:

ԻՍԼԱՄԻ ՆԿԱՏԱՎԱՐ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Արաքս Փաշայան

Հատկապես երկրորդ աշխարհամարտից հետո, երբ Եվրոպան էժան աշխատուժի կարիք ուներ, նախկին գաղութներից մեծ թվով մուսուլմաններ ներգաղթեցին եւ հաստատվեցին Արեւմտյան Եվրոպայում: Ժամանակի ընթացքում ձեւավորվեցին իսլամական համայնքներ, որոնց անդամներն այլեւս չէին ցանկանում ապրել էմիգրանտի կարգավիճակով, այլ ձգտում էին դառնալ Եվրոպայի լիիրավ քաղաքացիներ: Եթե ներգաղթի սկզբնական փուլում էմիգրանտները բնորոշվում էին ազգային պատկանելությամբ, ապա աստիճանաբար, որպես քրիստոնյա եվրոպացիներից տարբերվելու հատկանիշ, նրանց ինքնության մեջ տիրապետող դարձավ կրոնական պատկանելությունը, որն ավելի հզոր տարր էր եվրոպական քաղաքակրթության հետ մրցակցելու պարագայում: Եվրոպայում սկսեցին ձեւավորվել նաեւ վերազգային տարաբնույթ (այդ թվում՝ ցանցային) կառույցներ, որոնց նպատակներից էին իսլամի շուրջ մահմեդականների համախմբումը, եվրոպական հասարակության մեջ իսլամական ինքնության ամրապնդումը, իսլամի ինստիտուցիոնալացումը:

Քաղաքակրթական նոր միջավայրում եվրոպական երկրների քաղաքացիություն ստացած մուսուլմանների արդեն երկրորդ եւ երրորդ սերունդները պահանջում են հավաքական ինքնության ճանաչում, ինչը նշանակում է առաջին հերթին իսլամի ճանաչում:

Քաղաքակրթական առանձին միավորի ներկայությունը Եվրոպայում իր հերթին փորձություն էր հետքրիստոնեական աշխարհիկ արժեքներ որդեգրած Արեւմուտքի համար: Մուսուլմանների ինտեգրման հետ կապված խորքային դժվարությունները եւ նաեւ դրանից բխող իսլամի արմատականացման վտանգը եվրոպական պետություններին հանգեցրել են երկվության, ինչը նշանակում է մի կողմից՝ պահպանել աշխարհիկ պետության սկզբունքների շարունակականությունը, մյուս կողմից՝ իրականացնել իսլամի եւ եվրոպական աշխարհիկ, լիբերալ հասարակության ինտեգրում:

Ֆրանսիացի գիտնական Ռիվա Կաստորյանոյի համոզմամբ՝ Եվրոպայում իսլամի ստեղծած բախումը հանգուցալուծելու նպատակով եվրոպական պետությունները պետք է արձագանքեն փոխլրացնող երկու պահանջի. մեկը՝ ինստիտուցիոնալ, մյուսը՝ քաղաքական: Ինստիտուցիոնալ պահանջի կատարման դեպքում աշխարհիկ պետությունները պետք է

վերակառուցել իրենց ինստիտուտներն այնպես, որ իսլամն ընդհանուր ճանաչում ստանա կամ էլ՝ ընդլայնեն իրենց ինստիտուտներն ու ներառեն իսլամը եվրոպական հասարակություններում: Քաղաքական պահանջի դեպքում պետությունները պետք է որոնեն միջոցներ, որոնցով կապահովեն հավասար ինստիտուցիոնալ ներկայացվածություն եւ հավասար քաղաքացիական մշակույթ:

Եվրոպայում իսլամն ինստիտուցիոնալացնելու առաջին քայլերն արեց Մեծ Բրիտանիան, որտեղ, տարբեր տվյալներով, ապրում են 2 միլիոնից ավելի մուսուլմաններ, գործում են երկու հազարից ավելի մզկիթներ, հարյուրավոր իսլամական կազմակերպություններ, այդ թվում՝ պետության կողմից չճանաչված, սակայն սեփական համայնքներում լեգիտիմություն ունեցող շարիաթական դատարաններ:

Հատկանշական է, որ երբ 2004թ. ֆրանսիական խորհրդարանն օրենք ընդունեց պետական դպրոցներում կրոնական ատրիբուտիկայի (այդ թվում՝ գլխաշորի) արգելքի մասին, առաջին արձագանքողներից մեկը Մեծ Բրիտանիան էր՝ Արեւմտյան Եվրոպայի այն երկիրը, որտեղ մուսուլմաններին հասարակական հաստատություններում արգելված չէր *հիջաբ* կրելը: Լոնդոնի քաղաքապետն այդ օրենքը որակեց որպես հակաիսլամական՝ մշելով, որ խտրականության ցանկացած տեսակ՝ ուղղված մահմեդականների կրոնական ազատությունների դեմ, մշանակում է խարանել իսլամը:

2008թ. փետրվարին Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունը աջակցություն հայտնեց Անգլիկան եկեղեցու գահերեց Քենթրբերիի արքեպիսկոպոս Ռոյնեն Վիլյամսի՝ երկրի իրավական գործառույթում շարիաթական որոշ տարրեր ներդնելու սենսացիոն առաջարկին, որը մեծ հնչեղություն ստացավ ողջ Եվրոպայում: Վիլյամսը դաժան քննադատության ենթարկվեց թե՛ Անգլիկան եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականության, թե՛ բրիտանական եւ արեւմտյան հասարակական-քաղաքական ու կրոնական առանձին շրջանակների կողմից:

Անգլիկան եկեղեցում մինչ օրս առկա խորքային հակասությունները դրսեւորվեցին այն բանից հետո, երբ 2008թ. փետրվարին Ռ.Վիլյամսը «Իսլամն ու անգլիկան օրենքը» խորագրով դասախոսություն կարդաց: Խոսելով Միացյալ Թագավորության իրավական գործառույթում հաջողությամբ ներդրված կաթոլիկության եւ հուդայականության որոշ նորմերի մասին՝ Վիլյամսը կողմ արտահայտվեց երկրի իսլամ բնակչության համար շարիաթական որոշ դրույթների ներդրմանը: Նրա համոզմամբ՝ անհրաժեշտ է կանխել դեպքերի այնպիսի ընթացքը, երբ երկրի իսլամադավան բնակչությունը ստիպված է ընտրություն անել կրոնի եւ իրավունքի միջեւ:

Այդ իսկ պատճառով վերջիններս պետք է ունենան հնարավորություն՝ լուծելու իրենց ընտանեկան եւ ֆինանսական հարցերն այն դատարանում, որն ընդունում է շարիաթի օրենքները: Անգլիկան եկեղեցու առաջնորդի համոզմամբ՝ բանական որեւէ մարդ չի ցանկանա իր երկրում տեսնել շատերի մոտ իսլամի հետ նույնացվող հակահումանիզմի դրսեւորումներ, երբ իսլամական համայնքների ներկայացուցիչները կարգավորում են վիճելի հարցերը մասնավոր ձեւով՝ իրենց իսկ կողմից ստեղծված շարիաթական դատարաններում՝ առաջնորդվելով օրենքի մասին սեփական պատկերացումներով:

Շարիաթական նորմերի ներդրման կողմնակիցների կարծիքով՝ շարիաթի քաղաքացիական օրենքների ընդունումը Եվրոպայում անխուսափելի է եւ կօզնի մուսուլմանների սոցիալական համախմբվածությանն ու ինտեգրմանը: Մինչդեռ բրիտանական օրենքի մենաշնորհի դեպքում վտանգներն անխուսափելի են:

Հաշվի առնելով «ծերացող» Եվրոպայում մահմեդականների ժողովրդագրական չափազանց բարձր ցուցանիշները՝ Դանիայի արդարադատության նախարարի համոզմամբ, «եթե Դանիայի բնակիչների երեք քառորդը վաղը ցանկանա ներմուծել շարիաթական օրենքներ, ապա այդպիսի հնարավորություն պետք է լինի»:

Արդյունքում՝ բրիտանական խորհրդարանն ընդունեց համապատասխան օրենք, համաձայն որի՝ այդ երկրում ապրող մահմեդականներն այլեւս կարող են չենթարկվել աշխարհիկ օրենսդրությանն այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝ ամուսնությունը, ապահարզանը եւ ժառանգությունը: Ավարտելով մի քանի տարի առաջ սկսված գործընթացը՝ բրիտանական կառավարությունն այլեւս ճանաչում է շարիաթական այնպիսի նորմ, ինչպիսին է բազմակնությունը: Ժառանգության մասին օրենքում համապատասխան փոփոխություն է մտցվել: Եթե նախկինում տվյալ ամուսնու միայն մի կինը կարող էր ստանալ վերջինիս ժառանգությունը, ապա նոր օրենքը հնարավորություն է տալիս բոլոր կանանց:

Եթե շարիաթական առանձին նորմերի ճանաչումը շոկային ազդեցություն ունեցավ եվրոպական հասարակություններում, որտեղ մինչ օրս էլ չեն դադարում հակաիսլամական առանձին ելույթները, ապա մուսուլմանների շրջանում որեւէ արտառոց բան տեղի չունեցավ իսլամական օրենքների գործադրման տեսանկյունից, քանի որ, ինչպես ցույց են տալիս 2004թ. անցկացված հարցախույզի տվյալները, բրիտանացի մուսուլմանների վաթսուն տոկոսն արդեն իսկ ապրում է շարիաթական օրենքներով:

Առհասարակ, 2008թ. սկզբին Մեծ Բրիտանիայում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք ունեն նոր միտումների դրսեւորման հեռանկար:

Երկրի կառավարությունն ընդունեց որոշում, համաձայն որի՝ մահմեդականների իրականացրած ահաբեկչությունը՝ հանուն իսլամի, իրականում հակաիսլամական երեւոյթ է: Դեռեւս 2007թ. Եվրոպական միությունը հրապարակել էր որոշում, որում արգելված էր ահաբեկչության հետ կապված հարցեր քննարկելիս օգտագործել այնպիսի բառեր, ինչպիսիք են *ջիհադ*, *իսլամական ահաբեկչություն*, *ֆունդամենտալիստներ* եզրերը, եւ դրա հետ մեկտեղ՝ առաջարկվել էր ոչ վիրավորական ֆրազների օգտագործում: 2007թ. Մեծ Բրիտանիայի վարչապետն իր նախարարներից արգելել էր «ահաբեկչություն» եզրի կողքին օգտագործել «մուսուլմաններ» եզրը: Դրանից հետո երկրի ներքին գործերի նախարար Ժաքյու Սմիթն ավելի հեռուն գնաց՝ ահաբեկչությունը որակելով որպես հակաիսլամական, ինչը նոր իրողություն է անգլո-սաքսոնական հռետորականության մեջ: Իսկ Ներքին գործերի նախարարությունը հրատարակեց դարձվածաբանական մի բառարան, որտեղ պետական ծառայողներին հրահանգվում է *իսլամական ծայրահեղականություն* (Islamic extremism) կամ *ֆունդամենտալիստ-ջիհադականներ* (jihad-fundamentalists) եզրերի փոխարեն օգտագործել *բռնի ծայրահեղականություն* (violent extremism) կամ *հանցագործ մարդասպաններ* (criminal murders) եզրերը:

Հատկանշական է, որ բրիտանական կառավարությունը իսլամ հավատացյալների կրոնական զգացմունքները չվիրավորելու նպատակով վերջին շրջանում արգելել է քրիստոնեական տոների ժամանակ սրահների եւ խանութների ցուցափեղկերում ներկայացնել ծննդյան կամ զատկվա նախկին խորհրդանիշները: Իսկ Բելգիայում, այդ նույն նկատառումից ելնելով, իսլամական Ռամադանի ծոմապահության շրջանում տեղական ոստիկաններին խստորեն արգելվել է փողոցում սնվելը:

Վերջին շրջանում Մեծ Բրիտանիայում զգալի քայլեր են արվել նաեւ բանկային համակարգում շարիաթական օրենքների ներդրման հարցում: Այսպես. Lloyds TSB բանկը հնարավորություն է ստեղծել մուսուլմանների համար բանկային գործարքներ կատարել շարիաթական սկզբունքների համաձայն: Ի դեպ, Մեծ Բրիտանիայում առաջին իսլամական բանկը (Islamic Bank of Britain) հիմնվել է 2004թ.: Հատկանշական է, որ Եվրոպայի մյուս երկրներում նույնպես տեղի իսլամ բնակչության համար բացվել եւ բացվում են իսլամական տիպի բանկեր, որոնց գործունեության մեջ վաշխառությունն արգելվում է:

Հատկանշական է, որ հետեւելով Մեծ Բրիտանիային՝ Եվրամիությունը պաշտոնապես ընդունեց սեփական նորմերով առաջնորդվելու մահմեդականների իրավունքը: Ակնհայտ է, որ հանդուրժողականության եւ

Ժողովրդավարության ճանապարհով գնացող Արեւմուտքն այսօր քայլ առ քայլ ընդառաջ է գնում Եվրոպայի իսլամական համայնքների պահանջներին: Ասվածի ապացույցն է նաեւ Գերմանիայի ներքին գործերի նախարար Վոլֆգանգ Շոյբլեի՝ 2008թ. մարտին արված հայտարարությունն այն մասին, որ գերմանական դպրոցներում քրիստոնեությունից եւ հուդայականությունից բացի գերմաներենով դասավանդվելու է նաեւ իսլամ: Իսկ Նիդեռլանդների կառավարությունը իսլամական աշխարհի եւ միջազգային տարբեր շրջանակների ճնշման արդյունքում ի վերջո արգելեց Յիրտ Վիլդերսի՝ իսլամի ու նրա սուրբ գրքի մասին սուր քննադատություն պարունակող եւ մեծ աղմուկ հանած «Ֆիթնա» ֆիլմի ցուցադրումը, որն, ըստ էության, հակասում է խոսքի ազատության մասին արեւմտյան պատկերացումներին:

Նմանօրինակ ֆիլմի գոյությունը մեկ անգամ եւս ապացուցում է, որ Եվրոպան չի ուզում դուրսդուրս հաշտվել «Յին մայրցամաքում» իսլամի հարածուն ներկայությանը: Չետաքրքրական է, որ 2007թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում Շվեյցարիայում իշխանության եկած աջ ուժերի կողմից անհրաժեշտ քանակությամբ (մոտ 115 հազար) ստորագրահավաք կազմակերպվեց՝ սահմանադրության մեջ մզկիթների կառուցումն արգելելու մասին համապատասխան փոփոխություն մտցնելու համար:

Իսլամին առնչվող իրողությունների արդյունքում՝ եվրոպական հասարակությունները բախվել են քաղաքացիական բուրժուազիաների մոր մշակույթի ձեւավորման խնդրին: Եթե Եվրոպայում աշխարհիկությունը կրոնը դուրս էր մղել հասարակական-քաղաքական դաշտից՝ հանուն պետության չեզոքության եւ քաղաքացիական հասարակություններում կրոնների հավասարության, ապա իսլամի ճանաչումը հանգեցնում է հասարակական-քաղաքական կյանքում կրոնական բաղադրիչի ներկայացվածությանը:

Իսլամի ճանաչումը Եվրոպայում ստիպում է մտածել ոչ միայն «իսլամական էքսպանսիայի» (եթե հաշվի առնենք նաեւ այն փաստը, որ մեծ թվով եվրոպացիներ ընդունում են իսլամ), այլեւ արեւմտյան հասարակություններում կրոնի նոր դերակատարության հեռանկարի մասին: Պատահական չէ, որ մուսուլմանների պահանջները ստիպել են Ֆրանսիայի կաթոլիկ եկեղեցուն կրկին քննարկել պետության հետ իր հարաբերությունները:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԾԱԿԱՏԸ

Վերջին ժամանակներս աշխարհի շատ երկրներում ահաբեկչական խմբավորումներն աշխուժացել են: Իրաքում, Պակիստանում, Աֆղանստանում, Յյուսիսային Կովկասում գրեթե ամեն օր պայթյուններ են որոտում: Չեն խաղաղվում եւ Չինաստանի Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջանի (ՍՈՒԻՇ) անջատողականները: Նրանք օգտվեցին Պեկինյան օլիմպիադայից, որպեսզի հերթական անգամ բարձրաձայնեն երկրի կենտրոնական իշխանություններից իրենց դժգոհության մասին: Օլիմպիադայի նախօրեին ու եռուն պահին ույղուր արմատականները չինական Քաշգար եւ Քուզա քաղաքներում հարձակվեցին ոստիկանական տեղամասերի վրա, ինչպես նաեւ ստանձնեցին երկրի տարբեր բնակավայրերում հասարակական փոխադրամիջոցներում իրականացված հուլիսյան պայթյունների պատասխանատվությունը: Արդեն օլիմպիական խաղերի ավարտից հետո ՍՈՒԻՇ-ում, եգիպտացորենի դաշտում, թաքստոցից հարձակման ենթարկվեց չինական ոստիկանական ջոկատը: Դանակներով զինված հանցագործների հարձակման արդյունքում կարգի պահապաններից երկուսը զոհվեցին, հինգը վիրավորվեցին:

Իսլամ դավանող ույղուրների եւ Չինաստանի կոմունիստական իշխանությունների միջեւ հակամարտության շարժառիթների մասին է պատմում Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Յեռավոր Արեւելքի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր **Յակով Բերգերը**:

Չարք – Ո՞ր գործոնն է - ազգային, թե՞ կրոնական - առավել չափով որոշում Չինաստանի մուսուլմանական երկրամասերի արմատականորեն տրամադրված բնակչության ագրեսիվ գործողությունները:

Պատ. – Սկզբում կցանկանայի օգոստոսին Չինաստանում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ մի քանի դիտողություն անել: Այո՛, այդ գրոհների մասին նախազգուշացվել էր մի կազմակերպության տեսաուղերձի միջոցով, որն իրեն կոչում է Արեւելյան Թուրքեստանի կուսակցություն: Մի շարք երկրներում, օրինակ՝ Ճապոնիայում, տարածվեցին տեսառկուլակներ, որտեղ ոմն զինված իսլամիստ, դիմակով ու

հրացանը ձեռքին, ուլողւրերենով զգուշացնում էր մուսուլմաններին, որ ոչ մի դեպքում չհինացիների հետ չգտնվեն միեւնոյն ավտոբուսում, գնացքում, ինքնաթիռում: Որքանո՞վ է դա տարածվում մեկ կենտրոնից՝ դժվար է ասել: Ոստիկանների վրա հարձակումներից մեկի բնույթն իսկ բավականին տարօրինակ է: Այն նման չէ հզոր կենտրոնների կողմից նախաձեռնված սովորական ահաբեկչական գրոհներին: Երկուսը գրավում են բեռնատարը, ներխուժում ոստիկանական տեղամասի տարածք, նետում նռնակներ: Իսկ հետո դանակներով սպանում են 16 մարդու ու եւս 16-ին վիրավորում: Եվ այդ բոլորը կատարվում է տեղամասի բակում, որտեղ առողջ տղամարդիկ առավոտյան մարզանքով էին զբաղվում: Ի՞նչ կերպ է հարձակվողներին հաջողվել նման շոշափելի կորուստ հասցնել՝ հասկանալի չէ: Չհինացիները հայտարարեցին, թե դա ահաբեկիչների ձեռքի գործն է: Մյուս կողմից՝ համանման միջադեպեր տեղի են ունենում նաեւ երկրի ոչ մուսուլմանական շրջաններում: Անգամ չինական իշխանութիւնները նմանատիպ հարձակումները չկապեցին միասնական կազմակերպության հետ: Որոշակիորեն հաստատել, թե այդ հարձակումը կապված է «Ալ-Կաիդայի» կամ իսլամիստների այլ միջազգային ուժի հետ, շատ դժվար է:

Ինչ վերաբերում է ուլողւրական անջատողականության հետ կապերին, ապա այստեղ դրական պատասխանի համար զգալիորեն շատ հիմքեր կան: Այս տարածաշրջանի եւ ուլողւրների ավանդույթն ընդհանրապես լեցուն է Չինաստանի տիրապետության տակից դուրս գալու ձգտումներով: Պատմությունը հիշում է անկախ ուլողւրական պետությունների գոյության մասին: Ինչպես հեռու ժամանակներում, այնպես էլ բոլորովին վերջերս՝ 1930-1940թթ., գոյություն ունեին անկախ, այսպես կոչված, «Արեւելյան Թուրքեստանի իսլամական հանրապետություններ»: Այդ տարածքը մշտապես եղել է Ռուսաստանի ու Չինաստանի միջեւ ազդեցության համար պայքարի օբյեկտ: Տարածաշրջանի այս կամ այլ ուժերը ժամանակին աջակցություն են ստացել ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ հոմինդանական եւ կոմունիստական Չինաստանի կողմից: Շատ հաճախ այդ ուժերը, որոնք պայքարում են երկրամասի անկախության համար, դառնում են հատուկ ծառայությունների գործիք:

Սինցզյանում, սկսած Չինաստանի ժողովրդական Հանրապետության հաստատման ժամանակներից, տեղի են ունենում երկու գործընթաց, որոնք նպաստում են բողոքի սաստկացմանը: Առաջին. տարածքի բնակեցումը չինացիներով: 50-ական թվականների սկզբին իսլամական ժողովուրդները, նախեւառաջ՝ ուլողւրները, կազմում էին ՍՈՒԻՇ-ի ճնշող մեծա-

մասնությունը: Այսօր շրջանի 20 մլն բնակչության 45 տոկոսը ուղղորդված են, իսկ 41 տոկոսը՝ էթնիկ չինացիներ (հաներ), չհաշված բանակը եւ հատուկ ծառայությունները, որոնք գրեթե բացառապես կազմված են չինացիներից: Երկրորդ. հաղթահարված չէ ուղղորդված են չին բնակչության միջուկը խտրականությունը: Երկու ժողովուրդները գործնականում ապրում են միմյանցից մեկուսացված: Ուղղորդված են պահպանել սեփական մշակույթը, գիրը: Ոչինչ չտվեցին գիրը լատինական այբուբենի փոխելու փորձերը. նրա կրողները նախկինի պես հետեւում են արաբական գրությանը: Դա հանգեցնում է նրան, որ կրթության մակարդակն ավելի ցածր է, քան նրանց մոտ, ովքեր տիրապետում են չինական գրին ու սովորում են չինական դպրոցներում: Այդ իսկ պատճառով ուղղորդված բնակչության առավել աղքատ, անգրագետ մասն են: Նրանք այսօր ապրում են այնպես, ինչպես հարյուրավոր տարիներ առաջ էր. լավագույն դեպքում զբաղվում են առեւտրով, իսկ հիմնականում՝ օազիսային հողագործությամբ Սինցզյանի հարավային անապատային հատվածներում: Չինացիները, որպես կանոն, ապրում են քաղաքներում, վերջին տարիներին կառուցված ժամանակակից բազմահարկ շենքերում: Դեռ մի քանի տասնամյակ առաջ Սինցզյանի քաղաքները, ինչպիսին Ուրումչին է, կազմված էին փոշոտ փողոցների կանգնած կավաշեն տներից: Այժմ այդ թաղամասերում ապրում են միայն ուղղորդված: Իսկ չինական թաղամասերում երկնաքերներ, բանկեր, հյուրանոցներ, ռեստորաններ են:

Այս ամենը հող է ստեղծում իսլամի առավել կոշտ ձեւերի տարածման համար: Ես չեմ բացառում, որ Սինցզյանում, ուղղորդվածի շրջանում, կան «ծովից ծով» իսլամական պետության ստեղծման պանիսլամիստական տրամադրություններ, սակայն կարծում եմ, որ Չինաստանի շրջանակներում ուղղորդվածի լայն ինքնավարության ձգտումը գերակշռում է: Ոմանք, հավանաբար, նույնիսկ ձգտում են երկրամասի լիակատար անջատման:

Չարք – Չինաստանի կենտրոնական իշխանություններն իրենց մոլուկմանական գավառների նկատմամբ ինչպիսի՞ քաղաքականություն էին վարում:

Պատ. – Այդ շրջանը պատմության տարբեր ժամանակահատվածներում եղել է Չինաստանի իշխանության տակ: Հաների կողմից նրա գաղութացումը սկսվել է մեր թվարկությունից առաջ առաջին հազարամյակին, Հաների հարստության ժամանակ: Չինական պետության վերջին

ընդարձակումը տեղի է ունեցել 18-րդ դարում, երբ Մանջուրական հարստությունն իր տիրապետությունը հաստատեց եւ Ջունգարիայի (Սինցզյանի հյուսիսում), եւ Քաշգարիայի վրա, ուր բնակվում է ուլղուրների մեծ մասը: Եղել են ժամանակաշրջաններ, երբ գոյություն են ունեցել ինքնուրույն ուլղուրական պետություններ՝ խանություններ, խաքանություններ: Նրանք երբեմն միավորվում էին, բայց հաճախ եղել են անջատ: Չինացիների կողմից նվաճումից հետո եղել են բազմաթիվ ապստամբություններ, որոնք խիստ դաժանորեն ճնշվել են, կոտորվել են հարյուր հազարավոր ուլղուրներ: Սակայն եթե խոսենք իսլամի մասին, ապա դա փոքր-ինչ այլ պատմություն է: Իսլամը Չինաստան է եկել Թանական հարստության ժամանակ, 7-8-րդ դարերում: Եկել է ցամաքային (Մետաքսի) եւ ծովային ճանապարհներով, արաբ ու պարսիկ վաճառականների միջոցով: Իսլամն իրեն Չինաստանում վատ չէր զգում: Որոշ պատմական մզկիթներ պահպանվել են մինչ մեր ժամանակները. խոշոր քաղաքներում՝ Պեկինում, Գուանչժոուում, Սիանում դրանք նույնիսկ վերակառուցվում, նորոգվում են: Եղել են չին ականավոր գործիչներ, որոնք դավանել են իսլամ: Երեք տարի առաջ Չինաստանում նշեցին մեծ ծովագնաց Չժեն Խեի ծովային արշավանքների 600-ամյակը, որը մուսուլման էր: Ուստի անհրաժեշտ է հստակորեն տարանջատել իսլամն ու Չինաստանի տարածքային ամբողջականությունը, ինչը չինացիները բոլոր ժամանակներում շատ խստորեն պահպանել են:

Չարդ – Մաո Ցզեդունի ժամանակների հակակրոնական հալածանքները չե՞ն շրջանցել Սինցզյանը:

Պատ. – 1957թ.՝ իմ Սինցզյանում եղած ժամանակ, ես ականատես եղա, այսպես կոչված, «ազգայնականների» կոշտ զտումներին: Նրանց քշում էին համակենտրոնացման ճամբարներ: Ի դեպ, Սինցզյանը մի ժամանակ եղել է Չինաստանի բոլոր կողմերի բռնադատվածների համար արքայի եւ համակենտրոնացման ճամբարների վայր: 1957թ. գործնականում ոչնչացվեց ուլղուր մտավորականության ողջ վերնախավը:

Այնուհետեւ, «կուլտուրական հեղափոխության» ժամանակ, վրա հասավ բոլոր կրոնների, այդ թվում նաեւ իսլամի, հալածանքների ալիքը: Ոչնչացվեցին եւ բուդդայական, եւ կոնֆուցիական տաճարները, եւ մզկիթները: Մաոյից հետո չինական ղեկավարությունը փորձեց կարգավորել հարաբերությունները կրոնական առաջնորդների հետ: Ստեղծվեցին հոգեւոր կյանքի կառավարման կազմակերպություններ: Նույնը կատարվում էր նաեւ իսլամի հետ: Հիմնվեցին իշխանություններին վերահսկելի

մուսուլմանական կազմակերպություններ: Նրանցից գլխավորը Չինաստանի մուսուլմանական ասոցիացիան է, որն ունի տեղական բաժանմունքներ ողջ երկրում: Նրան կից գործում է Իսլամական աստվածաբանական ինստիտուտը, որտեղ պատրաստություն են անցնում մուսուլման հոգեւորականները: Ասոցիացիան կազմակերպում է ուխտագնացություն դեպի Մեքքա, հրատարակում «Մուսուլմանությունը Չինաստանում» հանդեսը: Կառուցվում են նոր մզկիթներ: Միեւնույն ժամանակ, այսօր եւս գոյություն ունեն սահմանափակումներ. կոմունիստական կուսակցության անդամներին, ինչպես նաեւ անչափահասներին արգելված է հաճախել մզկիթ:

Չարք – Բացի ուլղուրներից, ի՞նչ ժողովուրդներ են Չինաստանում դավանում իսլամ: Արդյոք այդ պետության տարբեր գավառներում ապրող մուսուլմանների միջեւ համերաշխություն կա՞:

Պատ. – Մուսուլմանները Չինաստանում մոտ 20 մլն են: Դա երկրի բնակչության երկու տոկոսից փոքր-ինչ պակաս է: Ուլղուրները Չինաստանի մուսուլման ժողովուրդների մեջ զբաղեցնում են երկրորդ տեղը, իսկ առաջին տեղում հուերն (դոնդալներ) են: Նրանց լեզուն ու մշակույթը չինական են: Տարբերվում են նրանք սոսկ դավանանքով: Հուերը, ինչպես եւ ուլղուրները, բնակեցնում են երկրի հյուսիս-արեւմուտքը՝ Խուանխեի ուղրանը: Նրանք եւս ունեն իրենց ինքնավարությունը՝ Նինսյա-Հուերական ինքնավար շրջանը: Նրանք ապրում են նաեւ այլ շրջաններում, հատկապես Չինաստանի արեւելքում: Նախորդ դարերում նրանք բազմիցս ապստամբել են իշխանության դեմ, բայց ներկայումս չինական պետության մեջ բավականաչափ ինտեգրված են: Սակայն, պետք է ասել, որ Չինաստանի տարբեր քաղաքներում հաճախ են տեղի ունենում ոստիկանության հետ բնակչության բախումներ, պատահում են եւ զանգվածային բողոքներ իշխանությունների քաղաքականության դեմ. դրանք կապված են սոցիալական դժգոհության դրսեւորումների հետ: Դրա համար բավարար դրդապատճառներ կան, եւ մուսուլմաններն այստեղ բացառություն չեն:

Չարք – Չինաստանի կառավարությանը հաջողվե՞ց մարել Տիբեթի բուդդայականների զանգվածային բողոքները:

Պատ. – Տիբեթցիներն ունեն կրոնական եւ քաղաքական միասնական կենտրոն, ինչպես նաեւ ազգային ու հոգեւոր առաջնորդ, որը գտնվում է

չինական Տիբեթի սահմաններից դուրս, եւ միջազգային կազմակերպությունների վիթխարի ճյուղավորված ցանց: Տիբեթյան բողոքները կրում են անհամեմատ ավելի կազմակերպված բնույթ: Նրանք ծագում են ոչ ինքնաբերաբար, այլ միասնական ծրագրի համաձայն, եւ համակարգվում են: Համանման ոչինչ Սինցյանում, անշուշտ, չկա: Մուսուլմանները (եւ ույղուրները՝ մասնավորապես) մասնատված են: Մի կողմից՝ նման բողոքը հեշտ է ճնշել, մյուս կողմից՝ քանզի այդ գործողությունները կրում են հանպատրաստից եւ գրեթե համատարած բնույթ՝ դժվար է: Թեեւ այն, ինչ տեղի ունեցավ Տիբեթում, չի կարող չխթանել անջատողական տրամադրությունները հարեւան ՍՈՒԻՇ-ում: Բացի այդ, աշխարհի բոլոր կողմերում գոյություն ունեն ույղուրական կազմակերպություններ (ոչ ահաբեկչական, այլ ազգամշակութային), եւ նրանք սատարում են ցեղակիցների սոցիալական բողոքներին:

nvo.ng.ru

2. Բժեզինսկի. «ԱՄԵՐԻԿԱՆ ԿՈՐՑՐԵԼ Է ԻՆՔՆԱՎԱՏԱՅՈՒԹՅՈՒՆԸ»

Ամերիկյան արտաքին քաղաքականության ամենահարգարժան գործիչներից **Ջրիզնե Բժեզինսկին** եւ **Բրենթ Սքոուքրոֆթը** ստորել քննարկում են աշխարհում ԱՄՆ դիրքի մասին հարցը: Բժեզինսկին եղել է նախագահ Քարտերի ազգային անվտանգության հարցերով խորհրդականը, Սքոուքրոֆթը զբաղեցրել է նույն պաշտոնը Ջորջ Բուշ-ավագի եւ Ջերալդ Ֆորդի վարչակազմերում: Բանավեճը, որ կայացել է այս տարվա գարնանը, վարել է «Washington Post»-ի տեսաբան Դեևիդ Իզմատիուսը:

Բժեզինսկի: Վերջերս ինձ ապշեցրեց այն փաստը, որ Կոնգրեսին հղած իր ուղերձում նախագահն «ահաբեկչության դեմ պատերազմն» անվանեց մեր հարյուրամյակի գլխավոր գաղափարախոսական հակամարտություն: Ես մտածեցի. «Արդյո՞ք դա չափից ավելի ինքնավստահությունն է»: Դրսում նոր միայն 2008 թվականն է, եւ մեզ ասում են, թե ինչ գաղափարախոսական կոնֆլիկտ վճռորոշ դեր կխաղա ողջ հարյուրամյակի ընթացքում: Պատկերացնենք, որ 1908թ. մեզ խնդրեին ասել, թե ինչպիսի գաղափարախոսական հակամարտություն կկանխորոշի 20-րդ դարի բնույթը: Արդյո՞ք շատերն այդ ժամանակ կպատասխանեին, որ այն լինելու է աջ եւ ձախ, կարմիր եւ դարչնագույն ամբողջատիրական գաղափարախոսությունների միջեւ հակամարտությունը: Կամ 1808թ., Վիեննայի կոնգրեսում պահպանողականության հաղթանակի նախօրեին, արդյո՞ք շատերը կկարողանային կանխատեսել, որ 19-րդ դարը Եվրոպայի շատ տարածաշրջաններում կանցնի ազգայնական կրքերի ներքո:

Մեր հարյուրամյակի որոշիչ գաղափարախոսական մարտահրավերն ահաբեկչության դեմ պատերազմը չի լինի: Այն կլինի ոչ այդքան կոնկրետ որեւէ բան: Ըստ իս, խոսքը երեք հիմնարար փոփոխությունների մասին է:

Այդ երեւույթներից մեկը ես կոչում եմ «քաղաքական զարթոնք»՝ համաշխարհային մասշտաբի: Պատմության մեջ առաջին անգամ համայն մարդկությունը դարձել է քաղաքականապես ակտիվ: Եվ դա արմատական առաջընթաց է: Երկրորդ. տեղի է ունենում ազդեցության համաշխարհային կենտրոնի տեղաշարժ Ատլանտյան տարածաշրջանից դեպի Արեւելյան Ասիա: Խոսքն Ատլանտյան աշխարհի կործանման մասին չէ, այլ գերիշխանության կորստի, որից նա 500 տարի օգտվել է: Եվ երրորդ.

մակերես դուրս եկան գլոբալ մասշտաբի ընդհանուր խնդիրներ, որոնք պետք է միասին լուծել, այլապես կտուժեն բոլորը: Ես նկատի ունեմ ոչ միայն կլիման ու բնապահպանությունը, այլև աղքատության եւ անարդարության հիմնախնդիրը:

Իզնատիու: *Որպեսզի ավարտեք Ձեր միտքը՝ ի՞նչն է այսօր խանգարում այդ խնդիրները լուծելու մեր կարողությանը:*

Բժեզիսկի: Եթե այն վերածենք մի գործոնի, ես կասեի՝ Ամերիկան կորցրել է ինքնավստահությունը: Հասուն մարդու իմ ողջ փորձը կապված է համաշխարհային մասշտաբի վիթխարի հակամարտության՝ «սառը պատերազմի» հետ: Սակայն մենք այն վստահորեն ենք վարել: Իսկ այսօր ինձ սարսափեցնում է այդ «վախի մշակույթը», որին ամենուրեք բախվում ես:

Պարզ է, որ դա կապված է սեպտեմբերի 11-ի շոկի հետ: Այն, որ ողջ երկիրը հեռուստատեսությամբ հետեւում էր այդ իրադարձություններին, սասանեց ամերիկացիների հավատը: Եվ, որքան էլ դա ցավալի է, այդ վախը, իմ կարծիքով, բորբոքվեց նաեւ քարոզչության միջոցով: Այն հակաարդյունավետ էր: Խնդիրները, որոնք մեզ հարկավոր է լուծել, անհնարին է հաջողությամբ հաղթահարել, երբ երկրին կառավարում է վախը:

Իզնատիու: *Բրե՛նք, այժմ մեր խնդիրների էության գնահատման Ձեր հերթն է: Ի՞նչն է խանգարում կատարվածին անդրադարձելու մեր կարողությանը:*

Աքրուբրոֆ: Աշխարհում տիրող իրավիճակի իմ գնահատականը հիմնականում համընկնում է Ջրիզի տեսակետին: Սակայն թույլ տվեք ինձ սկզբում նկարագրել, այսպես ասած, պատմական խորապատկերը: Ըստ իս, «սառը պատերազմի» ավարտը, պատմական տեսանկյունից, դարձավ ժառանգականության որոշակի խզում համաշխարհային իրադրության մեջ:

«Սառը պատերազմը» մեզ ստիպեց սեւեռվել մեկ խնդրի վրա: Այն մոբիլիզացրեց մեզ, մոբիլիզացրեց մեր բարեկամներին ու դաշնակիցներին՝ միակ դաշինքի դեմ պայքարում: Այն ազդեց մեր մտածելակերպի վրա, ներգործեց մեր ինստիտուտների, այն ամենի վրա, ինչ անում էինք: Զգիտեմ, մեր պատմության մեջ եղե՞լ է, արդյոք, նույնատիպ մեկ այլ ժամանակաշրջան:

Եվ հանկարծ՝ պատմական չափանիշներով, մեկ ակնթարթում, այդ աշխարհը հեռացավ անցյալ, ու նրան փոխարինման եկավ մի աշխարհ,

ուր չկային սպառնալիքներ մեր բուն գոյությանը, ինչպես «սառը պատերազմի» ժամանակներում: Այն ժամանակ մեր ցանկացած սխալը կարող էր դառնալ մոլորակի կործանման պատճառ. այժմ այդպիսի բան արդեն չկար: Դրա փոխարեն, անմիջապես ծագեցին հարյուրավոր մանր խնդիրներ՝ նման քորոցի ծակոցներին: Եվ մենք փորձեցինք դրանք լուծել նախկին իրավիճակին հարմարեցված մտածողության ու ինստիտուտների օգնությամբ:

Իզնատիու: *Ինչպե՞ս էիք զգում՝ գտնվելով Սպիտակ տանը, երբ առկա էր միջուկային ոչնչացման սպառնալիքը:*

Սքոուլթրոֆ: Մշտապես առկա էր միտքը՝ եթե կողմերից մեկը թույլ տա լուրջ սխալ, հետևանքները կարող են լինել աղետալի համայն մարդկության համար: Արդյո՞ք մենք այդ մասին օր ու գիշեր մտածում էինք: Իհարկե՝ ոչ: Բայց կար զուգակցումը այդ վախի եւ ձգտման՝ հասկանալու, թե Սովետների մտքին ինչ է, եւ ունե՞ն, արդյոք, նրանք, ասենք, որեւէ տեխնիկական լուծման համար ներուժ, որը մեզ կդարձնի խոցելի եւ կողմերի համաչափությունը կվերածի անհամաչափության:

Իզնատիու: *Զբի՞գ, իսկ Դուք ի՞նչ էիք զգում՝ գտնվելով «նավապետական կամրջակին»:*

Բժեզինսկի: Իմ խնդիրներից մեկն էր միջուկային հարձակման դեպքում՝ նախագահի որոշման պատրաստման ժամանակ գործողությունների կորդինացումը: Չհայտնելով ոչ մի գաղտնիք՝ ասեմ, որ սկզբունքորեն իրավիճակն այս տեսքն ուներ. խորհրդային հրթիռների զանգվածային արձակումից թույլ անց մենք կստանայինք առաջին նախազգուշացումը: Մոտավորապես երկրորդ թույլեին հարվածի մասշտաբների ու հավանական թիրախների մասին, որոնց այն հասցվում է, մենք կունենայինք բավականին ճշգրիտ պատկերացում: Երրորդ թույլեին մենք արդեն կիմանայինք, թե մարտագլխիկները երբ կխոցեն մեր տարածքը եւ այլն: Եվ ահա այդ երրորդ թույլեին ազգային անվտանգության հարցերով խորհրդականի խնդիրն այն էր, որպեսզի հայտներ նախագահին կատարվածի մասին՝ փոխանցեր նրան այն տեղեկատվությունը, որ մենք ունեինք: Այնուհետեւ, նախագահը պետք է որոշեր, թե ինչպես հակադարձել:

Եվ այստեղ սկսում էին բարդությունները: Եթե խոսքը գնում է լայնածավալ հարձակման մասին, որոշում ընդունելն ակնհայտորեն հեշտ է: Դուք պատասխան հարվածը հասցնում եք բոլոր միջուկային ուժերով:

Բայց պատկերացրեք, որ խոսքը «ընտրովի» հարվածների մասին է: Այդ դեպքում անհրաժեշտ է ընտրություն կատարել: Նախագահը պետք է կշռադատի ունեցած բոլոր տարբերակները: Մենք ինչպե՞ս պետք է հակադարձենք: Այստեղ առկա էր անորոշության տարր: Ամեն դեպքում՝ որոշման ընդունման ողջ գործընթացը պետք է ավարտվեր մոտավորապես յոթերորդ րոպեին:

Յոթերորդ րոպեին տրվում է արձակման հրաման, եւ այն, ինչ մենք որոշել էինք, արդեն սկսում է կատարվել: Գրեթե 28 րոպե հետո խորհրդային հրթիռները պետք է հասնեն մեր տարածք: Դա նշանակում է, որ դու ինքդ եւ քո ընտանիքը զոհված եմ: Վաշինգտոնն այլեւս չկա: Մեր ռազմական ներուժի զգալի մասը ոչնչացված է: Սակայն պարզ է, որ նախագահն արդեն պատասխան գործողությունների վերաբերյալ ընդունել է կշռադատված որոշում: Մենք արդեն արձակել ենք սեփական հրթիռները: Վեց ժամ անց 150 մլն ամերիկյան ու խորհրդային քաղաքացիներ այլեւս ողջ չեն լինի: Ահա այսպիսի իրականությամբ էր մեզ վիճակված ապրել: Եվ մենք անում էինք ամեն ինչ, ինչ կարող էինք, որպեսզի իրավիճակին տանք առավելագույն կայունություն, առավելագույն տրամաբանական վերահսկելիություն: Չպահել քեզ սադրիչ ձեւով, բայց պահպանել զգոնությունն ու վճռականությունը, որպեսզի մյուս կողմից ոչ ոք չմտածի, թե կարող է հարված հասցնել եւ, ընդ որում, մնալ ողջ:

Այսօր ամեն ինչ լիովին փոխվել է: Իմ կարծիքով, Բրենթը գերազանց նկարագրեց իրադրությունը՝ հարյուրավոր «քորոցի ծակոցներ»: Այժմ մենք գտնվում ենք, այսպես կոչված, «ցրված տուրբուլենտության» իրավիճակում: Եվ դրա համար, ըստ իս, պահանջվում է այլ մտայնություն, աշխարհում կատարվող փոփոխությունների բարդ բնույթի խոր ընկալում:

Իզնատիու: *Ցանկալի կլիներ, որ Դուք մանրամասն կանգ առնեիք այս չափազանց բարդ իրադրությունում ամերիկյան առաջատարության բնույթին վերաբերող հարցի վրա: Նախեւառաջ՝ կա՞, արդյոք, դրա անհրաժեշտությունն ընդհանրապես:*

Բժեզինսկի: Այն կարող է խթանիչի դեր խաղալ: Ոչ այն իմաստով, որ Միացյալ Նահանգները կիրամայի բոլորին՝ ինչ անել, այլ գործողությունների պլանում, որոնց պատրաստ է հավաքական կերպով աջակցել, այսպես ասենք՝ կողմերի ընկերակցությունը, որոնք շահագրգռված են միջազգային համակարգի պահպանմամբ: Նման կարգի առաջատարության անհրաժեշտություն կա: Բայց որպեսզի Ամերիկյան կարողանա այդպիսի առաջատարի դեր խաղալ, մեզ անհրաժեշտ են ոչ միայն

ականավոր ղեկավարներ (իսկ այդպիսի մարդիկ ղեկի մոտ հայտնվում են ոչ միշտ), այլեւ, ընդհանուր առմամբ, առավել կրթված հասարակություն:

Իմ կարծիքով, Ամերիկայում ձեւավորվել է զարմանալի, տարօրինակ իրավիճակ՝ մենք միաժամանակ ե՛ւ բարձրակիրք ենք, ե՛ւ (ապշեցուցիչ է) անկիրթ: Մենք ինքնամփոփ հասարակություն ենք: Մեզ չի հետաքրքրում այլ երկրների պատմությունը:

Օրինակ, այսօր մեզ մոտ խնդիր է ծագել Իրանի հետ: Բայց, արդյո՞ք շատ ամերիկացիներ կգտնվեն, որոնք գեթ ինչ-որ բան կիմանան այդ երկրի պատմությունից: Գիտե՞ն, արդյոք, նրանք, որ Իրանն ունի «երկատված» պատմություն: Ըստ էության, խոսքը «երկու Իրանի» մասին է: Եվ այդ երկու ժամանակաշրջանները՝ մինչիսլամական եւ իսլամական, դիալեկտիկորեն սահմանում են ներկայիս Իրանի լարվածության կետերն ու իրողությունները: Ամերիկացիներն այդ մասին ոչինչ չգիտեն:

Բավականին շատ ամերիկացիներ քուլեջ ընդունվելիս չեն կարողանում քարտեզի վրա գտնել Մեծ Բրիտանիան: Իրաքի պատերազմն արդեն հինգ տարի գնում է, իսկ նրանք չեն կարողանում քարտեզի վրա գտնել եւ այդ երկիրը: Շրջանավարտների 30 տոկոսը չի կարողանում ցույց տալ որտեղ է գտնվում Խաղաղ օվկիանոսը: Մեզ մոտ համաշխարհային պատմություն, այլ երկրների աշխարհագրություն չեն դասավանդում: Կարծում են, ամերիկացիների մեծամասնությունը չի տիրապետում գիտելիքների այն անհրաժեշտ մակարդակին, որպեսզի մեր երկիրը կարողանա ոգեւորել, իսկ նշանակում է՝ նաեւ առաջնորդել մյուսներին, այսինքն՝ անել այն, ինչ մեզանից պահանջում են 21-րդ դարի իրողությունները:

Սքոուլբոք: Ես կարող էի պարզապես հեշտությամբ համաձայնել: Սակայն այդ իրադրությունը մասամբ կապված է մեր հասարակության բնույթի եւ «արմատների» հետ: Մեր պատմության գրեթե ողջ ընթացքում մեզ պաշտպանել են երկու օվկիանոսներ, իսկ մեր հյուսիսի եւ հարավի հարեւանները թույլ են եղել: Ամերիկացիներին կարիք չկա սովորել օտար լեզուներ: Նրանք կարող են ամեն տեղ այցելել՝ չլքելով Միացյալ Նահանգների տարածքը: Ուստի ամերիկացիների մեծ մասը բնազդորեն ուզում է, որպեսզի իրեն հանգիստ թողնեն: Կարծում են, նրանք չեն կամենում խճճվել շրջապատող աշխարհի խնդիրների մեջ: Նրանք պարզապես ցանկանում են վայելել կյանքը:

Եվ մեր քաղաքական համակարգը կարծես ավելի է սպասարկում ամերիկացիների այս նեղ շահերը, քան նրանց շահերը լայն իմաստով: Սոսկ վտանգի շրջանում են մեր առաջնորդները նպատակասլաց կերպով ուշադրություն հատկացնում միջազգային ասպարեզում կատարվող

իրադարձություններին՝ օրինակ, Երկրորդ աշխարհամարտի նախօրեին, երբ Ռուզվելտը փորձեց երկիրն անհրաժեշտ հունի բերել, կամ երբ Էյզենհաուերը կարգավորեց համագործակցությունը Եվրոպայի հետ՝ ստեղծելով ՆԱՏՕ-ն: Այս ամենի համար հենց նման մակարդակի ղեկավարություն է պետք:

Անհրաժեշտ ազդակների առկայության դեպքում, ամերիկացիներն, ըստ իս, բավական մեծահոգի են: Մենք նեղմտություն կամ ժլատություն չենք դրսևորում: Եվ ներկայիս աշխարհում միայն Միացյալ Նահանգներն է կրթյալ առաջնորդի դերին պիտանի, որը մարդկանց չի հրամայում՝ ինչ անել, այլ ասում է. «Եկե՛ք համախմբվենք: Ահա՛ ճանապարհը, որով պետք է շարժվի համաշխարհային ընկերակցությունը»: Մենք միակն ենք, որն ընդունակ է ցույց տալ դեպի առաջ ճանապարհը:

«Los Angeles Times»

29.09.2008

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տերտերյան

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ–ԵԿԵՂԵՑԻ–ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ 1

Վարդան Աթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐԵՆԴԻ ՁԵՎՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ 4

Ռուբեն Մելքոնյան

«ՆԵՐՔԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ» ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

ԵՎ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ 9

Մահիր Օզքան

ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԻ ՇՈՒՐՋ 14

Սեւակ Սարուխանյան

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆ – ԱՐԵՎՍՈՒՏՔ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 17

Սարգիս Հարությունյան

ԻՐԱՆՆ ԱՐԵՎՍՈՒՏՔԻ ՀԵՏ ԷՆԵՐԳԵՏԻԿ

ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ 22

Արաքս Փաշայան

ԻՍԼԱՄԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 28

Յակով Բերգեր

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ՃԱԿԱՏԸ 33

Զբիգնեյ Բժեգիճսկի

«ՎՄԵՐԻԿԱՆ ԿՈՐՑՐԵԼ Է ԻՆՔՆԱՎՍԱՀՈՒԹՅՈՒՆԸ»..... 39

*Շապիկին պատկերված է
Սելմանի կամուրջը (Խիզան)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղանյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: